


338.98

u-32



37 JAN 20 32-1
90
Эрм...

Ն. ՆԱՌԻՍՈՎ



ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ
ՀԱՐՁԱԿՄԱՆ
ԱՐՎԵՍՏԸ

338.98
G-32

LS

1931

ՅԵՐԵՎԱՆ

10.07.2013

32046



ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊ. 6376(Բ)
ՀՐԱՏԱՐ. № 1610
ՊԱՏՎԵՐ 2112
ՏԻՐԱԺ. 3000

3674 82

338.98

G-32

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Մեր կուսակցության 16-րդ համագումարն անցավ ամբողջ ֆրոնտով սոցիալիստական ծալալուռ հարձակման նշանով: Հեղափոխություն ներկայիս փուլը բնորոշ է նրանով, Վոր սոցիալիզմը բոլոր ճակատամասերում հաղթանակում է կապիտալիզմի վրա, տեղի չէ ունենում ամբողջ ժողովրդական տնտեսության արժատական վերակառուցում, աճում է քաղաքի պրոլետարական մասսաների և գյուղի բատրակ-չքալորական և միջակային մասսաների հեղափոխական գիտակցականությունն ու ակտիվությունը: Ամբողջ աշխարհում չտեսնված տեմպերով է զարգանում սոցիալիստական արդյունաբերությունը: Արագ է կատարվում գյուղատնտեսության արժատական վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով: Աճել են խորհանտեսությունները, ուժեղացել է նրանց ղեկավար դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Տեղի չէ ունենում վերջին և վճռական մարտը մեր յերկրի քանակապես ամենախոշոր շահագործող դասակարգի՝ կուլակության դեմ: Համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը վերացվում է, վորպես դասակարգ: Սոցիալիստական հատվածը զերակշռող տեղ է գրավել յերկրի ժողովրդական տնտեսության մեջ: Մենք թեփափոխել ենք սոցիալիզմի դա-



բաշխանք: Տեղի յե ունենում բոլոր պրոլետարական կազմակերպությունների արժատական վերակազմություն: Աճել և մեր կուսակցության մարտունակությունը: Նա հիմնական դոման միջոցով իր շարքերից փտաբել և քայքայված, բյուրոկրատացած, դատակարգայնորեն անհարազատ մարդկանց: Գաղափարապես և կազմակերպչորեն ջախջախված են աջ և «ձախ» ապորտունիստները:

Մեր կուսակցությունը՝ միասնական և միաձուլվ ինչպես յերբեք, շարունակելով անողոք պայքարը ավյալ շրջանի գլխավոր փտանդ աջ ուղորտունիզմի, ապա «ձախ» ցատկոտումների ու անակցությունը հաշտվողականության դեմ, հաջողությամբ ղեկավարում և սոցիալիստական հարձակումն ամբողջ փրոկտով:

Ծավալուն հարձակման ելությունն ըմբռնելու համար պետք և նախապես քննել սոցիալիստական հարձակման ընթացքը տարբեր փուլերում:

ՀԱՐՋԱԿՈՒՄԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՍՏՈՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սկզբնական քաղաքականությունը, վոր նկատի ունեն մի շարք աստիճանական փոփոխություններ և աստիճանական անցում դեպի սոցիալիզմ, քաղաքացիական կատաղի պատերազմի հարվածների տակ պետք և փոխարինվել ուղղման կոմունիզմի քաղաքականությամբ: Ռազմական կոմունիզմի տնտեսական քաղաքականությունը նախապես չեր մատնանշված: Այդ քաղաքականությունը զարգացավ դաժան իրականության հարվածների տակ: Նա առաջացավ կարիքից և քայքայումից, նա հետեւմանք եր քաղաքացիական պատերազմի: Մենք գանկանում եյինք քայլ առ քայլ հարձակվել թրջ-

նամու վրա՝ նվաճելու նրանից ճակատամաս առ ճակատամաս, սակայն թշնամին հարկադրեց մեզ հարձակում սկսել ամբողջ ճակատով: Դասակարգային թշնամին դրեց ուղղակի իշխանության հիմքերի, պրոլետարական դիկտատուրայի գոյության խոչ հարցը: Կապիտալիստական աշխարհը պայքարը հասցրեց ծայրագույն լարման: Նա հարկադրեց շատ ավելի մեծ չափերով խորտակել հին հարաբերությունները, քան այդ նախատեսվում եր առաջ: Մենք ստիպված յեղանք արտասովոր արագությամբ, լրիվ և վճռական կերպով ջախջախել և վերացնել հին տնտեսակարգը, ամբողջովին վերացնել շուկայական հարաբերությունները: Մենք աշխատեցինք ամենաարագ կերպով անմիջականորեն անցնել արտադրության և բաշխման կոմունիստական հիմունքներին:

«Մենք մեր տնտեսական հարձակման մեջ չափազանց շատ առաջացանք՝ չապահովելով մեզ բավականաչափ հիմքով: Մասնաճեղքը զգացին այն ինչ մենք այն ժամանակ դեռեւիս չկարողացանք դիտակցաբար ձեւակերպել, բայց վորը մենք ևս չուտով, մի քանի շաբաթ հետո խոստովոնեցինք՝ այն, վոր գուտ սոցիալիստական ձեւերի, գուտ սոցիալիստական բաշխման անմիջականորեն անցնելը գերադանցում և մեր առկա ուժերից և, վոր յեթե մենք ի վիճակի չլինեյինք նահանջ կատարելու և ուսմանախակվելու ավելի թեթեւ խնդիրներով, ապա մեզ սպառնում եր կործանում»:^{*)}

Մենք հարկադրված յեղանք նահանջելու: Կիրառելով այն պայմաններում անհրաժեշտ և դրության թելադրանք հանդիսացող ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, մենք փորձում եյինք անմիջականորեն

*) Ленин, т. XVIII, ч. 2, стр. 90.

անցնել կոմունիզմի շրջանը, կարծես մոռանալով կապիտալիզմից դեպի սոցիալիզմ յերկարատեղ և բարդ փոխանցման անհրաժեշտութիւնը:

2-ի կարելի արատաւորել ուղղմական կոմունիզմի քաղաքականութիւնը: Ռազմական կոմունիզմի քաղաքականութիւնը մեզ ոժանդակեց հաջողութեամբ ավարտելու քաղաքացիական պատերազմը և այդ խմաստով ուղղմական կոմունիզմին, ինչպես ասում եր Լենինը, «մենք պետք է յերախտապարտ լինենք»:

Հարձակում դործելով, ուղղմական կոմունիզմի հիման վրա, մենք չափազանց շատ առաջացանք և այնքան շատ դրավեցինք, վոր ի վիճակի չեղանք պահպանելու: Մենք հարկադրված յեղանք նահանջելու, մեր ձեռքում պահելով ամենազլխափորն ու հիմանկանը, մեզ վերապահելով իշխող բարձունքները: Մենք ստիպված յեղանք պահանջելու, վորպեսզի ուժ հաւաքենք և կուտակենք, վորպեսզի մի ամբողջ շարք շրջանցիկ դործողութիւններով սկսենք նոր հարձակում, անհրաժեշտ նախադրյալներ ստեղծենք սոցիալիստական ծավալուն հարձակման համար:

Մենք նահանջեցինք նրա համար, վորպեսզի վազելով և ավելի ուժեղ ցատկենք առաջ,

ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՆԵՊԻ ՇԻՄԱՆ ՎՐԱ

Արդեն մեկ տարի հետո կուսակցութեան XI համագումարը նահանջը համարեց վերջացած: Ուժերի վերախմբավորում կատարելով, կուսակցութիւնն սկսեց իր հարձակումը: Գյուղացիական մասսայի հետ համախմբված, մենք սկսեցինք առաջ շարժվել բաժակահաշի դանդաղ, բայց շարժվել հաստատ կերպով, անչեղօրեն՝ ամբողջ մասսայի հետ միասին: Կուսակ-

ցութիւնը հարձակումն սկսեց նեպի հիման վրա, սոցիալիստական եկանոմիկան գյուղացիական եկանոմիկայի հետ զոդելու հիման վրա:

Վոմանք կարծում են, թե հարձակումը բացասում է առանձին ճակատամասերում կատարելիք զիջումները: Դա միամիտ և սխալ հայացք է: Բայց չեմք իկները պետք է կարողանան հարկ յեղած մոմենտին և հարկ յեղած տեղում կատարել առանձին զիջումներ, վարոմք ամրացնեն մեզ, վորոմք ոժանդակեն մեր հարձակմանը: Հայտնի յե, վոր մենք զիջումներ արեցինք նահանջը վերջացնելուց հետո, նույնիսկ կայուն հաջողութիւններ ունենալով մեր հարձակման բնթացքում: Հայտնի յե, վոր նույնիսկ 1928 թ. կուսակցութիւնը համաձայնեց բարձրացնելու հացի գինը: Դա մի զիջում էր, զիջում մեր դաշնակից միջակին: Սակայն, բոլորին հայտնի յե, վոր հոգուտ միջակի կատարած այդ զիջումը ամրացրեց մեզ, նպաստեց ինդուստրացման հետագա հաջող դարգացմանը, ոժանդակեց սոցիալիզմի հետագա հարձակմանը:

Վոմանք յենթադրում են, թե սոցիալիստական հարձակումը մշտապես պետք է մղվի ամբողջ Ֆրոնտով: Դա սխալ հայացք է: Առանց լուրջ պատրաստութեան ծավալուն հարձակումը մատնված է անհաջողութեան: Բայց չեմք իկյան ուղղադիտութեան և տակտիկայի վարպետութիւնը հարձակումը պատրաստել կարողանալն է, մի շարք նախապատրաստական դործողութիւններով ծավալուն հարձակման հաջողութիւնն ապահովել կարողանալը: Վարպետութիւնն այն է, վոր կարողանանք գտնել և բռնել այդ ողակից, վորը հնարավորութիւն է տալիս պահել ամբողջ շղթան և հաստատապես

պատրաստվել անցնելու հաջորդ ողակին: Դեռ 1902 թ-
«Խոնչ անել» բրոշյուրում վերադարձի Իլլիչը գրում է:

«Ամբողջ քաղաքական կյանքը անվերջանալի
մի շղթա չէ, կազմված ողակների անվերջանալի
շարքերից: Գաղաքականության ամբողջ վար-
պետությունն էլ հենց այն է, վոր քաղաքակա-
նություն վարողը գտնի և ամրապնդե կերպով
կառչի հատկապես այն ողակին, վորն ամենից
քիչ կարող է ձեռքից խլվել, վորն ամենակարե-
վորն է տվյալ մոմենտին, վորը ողակի տիրոջ հա-
մար ամենից շատ յերաշխավորում է ամբողջ
շղթային տիրանալը»: *)

Կառուցել սոցիալիստական հասարակարգի հիմքը,
նախ և առաջ նշանակում է ստեղծել սոցիալիզմի հիմ-
նական բաղանձանք արդյունաբերությունը: Սա-
կայն, սոցիալիստական հասարակարգի հիմքի կառու-
ցումը կուսակցությունը պետք է սկսեր վոչ թե ար-
դյունաբերությունից, այլ գյուղատնտեսությունից:
Այն ժամանակ մենք ասլրում էյինք տնտեսական կոր-
ծանման շրջանում: Արդյունաբերության զարգացման
համար անհրաժեշտ է ունենալ ներքին շուկա, իսկ մեզ
մոտ այդ շուկան հիմնականում գյուղացիական շուկա
չէ: Արդյունաբերության վերականգնման համար ան-
հրաժեշտ է ունենալ հումքի բազա գյուղատնտեսության
մեջ: Արդյունաբերության վերականգնման համար ան-
հրաժեշտ է ունենալ պարենավորման բազա: Գյուղը
պետք է գյուղատնտեսական արտադրանքի վորոշ մասը
հատկացնի արդյունաբերական բանվորների սնման հա-
մար: Այս հանգամանքը հարկադրեց կուսակցության

արդյունաբերության վերականգնումն սկսել գյուղա-
տնտեսության բարձրացումից:

Բավականաչափ հաջողություններ ձեռք բերելով
գյուղատնտեսության զարգացման գործում, կուսակ-
ցությունը XIV համագումարում ամբողջ ուժով առա-
ջադրեց յերկրի ինդուստրացման խնդիրը: Կուսակցու-
թյունը յերկրի ինդուստրացման խնդիրը համարում էր
ամբողջ ժողովրդական տնտեսության բարձրացման և
գարգացման հիմքը:

Սոցիալիստական արդյունաբերության ուժգին
վերելքը նյութական-տնտեսական հիմք ստեղծեց գյու-
ղատնտեսության շտեմնված վերելքի, գյուղատնտեսու-
թյան սոցիալիստական ամենաարագ վերակառուցման
համար: XV համագումարը վերթարի հաջողություն-
ներ մատնանչեց արդյունաբերության ասպարիզում,
միաժամանակ նշելով գյուղատնտեսության զարգաց-
ման անրավարար տեմպը: Յեղնելով այն հանգամանքից,
վոր այդ գրությունից դուրս գալու միջոցը մանր ցըր-
ված գյուղացիական տնտեսություններից միացյալ խո-
խոշոր սոցիալիստական տնտեսության անցնելն է, XV
համագումարը տվեց՝ «գյուղ, առաջ, զեպի խոշոր հան-
րայնացված տնտեսություն» լողունգը: Այդ լողունգը
յուրացրեցին չքավոր և միջակ գյուղացիության ամե-
նալայն մասունքները: XV համագումարից հետո յեկող
ժամանակամիջոցը կոլտնտեսական մասսայական շարժ-
ման մի շրջան էր: Շատ ու շատ շրջաններ սկսեցին անց-
նել համատարած կոլեկտիվացման: XV մինչեւ
XVI համագումարը կուսակցությունը կատարեց իր
քաղաքականության վճռական շրջադարձերից մեկը՝
կուլակության, շահագիտական ձգտումների սահմանա-
փակման քաղաքականությունից անցնելով նրա, վոր-

*) Ленин, т. V, стр. 259.

պէս դասակարգի վերացման քաղաքականութեան՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա: Ինդուստրացման և կոլեկտիվացման սոցիալիզում ձևով բերած հրահրական հաջողութիւնների հիման վրա կուսակցութիւնը ծավալուն հարձակում կաղճակեց ամբողջ Փրոնտով, իր XVI համագումարը տանելով հետեւյալ լոզունգներով՝ սոցիալիզմի հարձակում բոլոր ֆակտամասերում, կուլակուքան, վարպետ դասակարգի վերացում համատարած կոլեկտիվացման հիման վրա:

ՆԵՄԻ ՈՊՈՐՏՈՒՆԻՍԱԿԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ՅԵՎ ԾԱՎԱՆՈՒՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Այդ լոզունգներն արդէոք չեն նշանակում նեպի վերացում: Ամբողջ Փրոնտով ծավալուն հարձակումը համասեղեւիլի՞ յե, արդէոք, նեպի հետ: Հասկապես այս հարցում մշտապես սայթաքել են և սայթաքում են աջ և «ձախ» ոպորտունիստները:

«Ձախերը» նեպը համարում են լենինիզմի նահանջի ամենալայն շարժումը: Հարձակման անցնելը «ձախերը» կապում են նեպի վերացման հետ: «Ձախերը» չեն հասկանում, վոր նեպը կապ ունի նահանջի, ուժերի վերախմբավորման նոր հարձակման հետ: Նրանք չեն հասկանում, վոր նեպը մի քաղաքականութիւն է, վորի դեպքում վորոշ չափով հանդուրժվում է կապիտալիզմը՝ իշխող բարձրունքները պարտադիր կերպով պահպանելով պրոլետարիատի ձեռքում, բարձունքներ, վորոնք հնարավորութիւն են տալիս վորոշ շրջանում, բոլոր ճակատամասերում ծավալել սոցիալիզմի հարձակումը կապիտալիզմի վրա: Նրանք չեն հասկանում, վոր նեպը մի քաղաքականութիւն է, վորը նկատի ունի կապիտալիզմի վտարումը, նրա դործունեյու-

թիւն շրջանների սահմանափակումը, վորը նկատի ունի սոցիալիզմի հաղթանակը կապիտալիզմի նկատմամբ: Նրանք չեն ըմբռնում, վոր նեպը մի քաղաքականութիւն է, վորը նկատի ունի դասակարգի վերացում, սոցիալիստական հասարակարգի հիմքի կառուցում: Նեպի յերկշաղ բնավորութիւնը չմոռնելը «ձախերին» հասցնում է մինչեւ աշնտեղ, վոր լայնորեն ծավալված հարձակման ժամանակ նրանք սկսում են հայտարարել, թե նեպը վերացվում է, նեպը լուծարելի յե յենթարկվում, նեպը վերջանում է: Նրանք սկսում են պահանջել, վոր ամբողջովին և անմիջապես վերացվի մասնավոր առեւտուրը, վերացվեն շուկայական հարաբերութիւնները, ամբողջովին և անմիջապես վերացվեն բոլոր կապիտալիստական տարրերը: Այդ ձախական առաջարկների կործանարար հետեւանքները բավարար պարզութեամբ ցուցադրվեցին տեղական մի շարք կաղճակեցութիւնների տխուր փորձով, վորոնք 1930 թ. դարնանը գործնականապես փորձում էին իրագործել նեպն անմիջապես վերացնելու լոզունգը:

Նեպի յութիւնը, նրա յերկշաղ բնավորութիւնը չեն ըմբռնում նաեւ աջ ոպորտունիստները: Աջերը չեն հասկանում, վոր նեպը մեկ համար ապահովում է սոցիալիզմի հաղթանակի հնարավորութիւնը: Նրանք մոռանում են, վոր կապիտալիզմի դեմ պայքարելով միայն մենք պետք է այդ հնարավորութիւնը դարձնենք իրականութիւն: Նրանք կարծում են, թե նեպն «ինքնաբերաբար», «ինքնահոսով» ապահովում է սոցիալիզմի հաղթանակը: Աջերը չեն ըմբռնում, վոր նեպ նշանակում է միայն վարք չափով ազատ առեւտրի հանդուրժում: Նրանք չեն հասկանում, վոր ինչքան արմատում է սոցիալիստական եկանոթիկան, այնքան

ուժեղանում է ազատ առեվտրի սահմանափակումը, նեղանում են նրա սահմանները, ապրանքաշրջանառությունն աստիճանաբար փոխարինվում է սոցիալիստական մթերքափոխանակությամբ:

Աջերը չեն ըմբռնում, վոր սոցիալիզմի հաղթանակը կապիտալիզմի նկատմամբ հնարավոր կլինի միայն այն ժամանակ, յերբ մենք պահպանենք և ուժեղացնենք պրոլետարական պետութիւնն զեկալար, կարգավորող դերը չուկայում:

Նեպոլի յերկայակ բնավորութիւնն չբարոնելը աջերին
աշնտեղ ե հասցնում, վոր պրոլետարիատի կարգավորող
դերի ուժեղացման առկարի ազատութիւնը սահմանա-
փակելու յուրաքանչյուր նոր քայլի ժամանակ նրանք
սկսում են ճշալ... Նեպոլի վերացման, ռազմական կոմու-
նիզմին վերադառնալու մասին :

Անշեղորեն շարունակելով սոցիալիստական հար-
ձակումը նեպոլ հիման վրա, կուսակցությունը պայքա-
րում է յերկու Փրոնտով. ընդդեմ «ճախականների» վո-
րոնք վորձում են անմիջապես վերացնել նեպը՝ ազա-
տեւտուրն ամբողջովին վերացնելու միջոցով և ընդդեմ
աջերի, վորոնք ձգտում են առեւտրի կատարյալ ազա-
տություն և պրոլետարական պետութեան կարգավո-
րող դերի վերացման:

Ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակումը չի նշա-
նակում նեպի վերացում, վրոյվհետեվ նեպը նկատի
ունի սացիալիստական եկանոմիկայի հիմքի կառու-
ցումը :

Նեպը մտցված է սոցիալիզմի հաղթանակի համար կապիտալիստական տարրերի նկատմամբ: Անցնելով ամբողջ ֆրոնտով հարձակման, մենք դեռեւիս չենք վերացնում նեպը, վորովհետեւ

մանավոր առևտուրը և կապիտալիստական
տարրերը դեռևս մնում են, ապրանքաընթաց-
ուղիքները և զբաղական տնտեսությունը դեռևս
մնում են, բայց մենք վորոշակի կերպով վերա-
դնում ենք նեպի սկզբնական փուլը, ծավալելով
նրա հաջորդ՝ նեպի ներկայիս փուլը, վոր հան-
դիսանում է նեպի վերջին փուլը: *

Միայն անհուսալի կերպով մոլորված մարդիկ չեն տեսնում այն սկզբունքային արմատական տարբերությունը, վոր զոյաթյուն ունի ամբողջ Ֆրոնտով ծափալուն հարձակման ներկա շրջանի և ռազմական կոմունիզմի շրջանի միջև: Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը քաղաքացիական պատերազմի հետևանք հանդիսացող հարկադրական մի քաղաքականություն էր յերկրի կարիքի, կործանման, քայքայման և թշվառություն պայմաններում: Հատկապես պատերազմը, թշվառությունը, անկումն ու սոցիալականությունը թեյադրեցին պետական ամենազաւթան կարգավորման անհրաժեշտությունը: Այլ պատկեր ենք տեսնում մենք այժմ: Մենք ուժեղացնում ենք պետություն կարգավորող դերը՝ տնտեսություն ածման, սոցիալիստական հասկածի ամրացման, յերկրի ազգային հարստության ածման հիման վրա: Յեթե ազգային հարստության ածման հիման վրա կուլակաւացումը ռազմական կոմունիզմի շրջանում ապակուլակացումը մատարիլ չարեցինք), ապա ներկայումս կատարվող ամենապակուլակացումը հանդիսանում է համատարած կուլակատիւացման հիման վրա կուլակություն, վորպես դատակարգի վերացման քաղաքականություն անխղիւ և քաղկացուցիչ մասը: Վերացնելով կուլակությունը,

*) Ստալինը, Կենտկոմի հաշվապետ թյունը XVI համագումարին:

մենք միաժամանակ արմատախիլ եեմ անում կապիտա-
լիզմը, վերացնում ենք նրան սնուցող հիմքը, վերաց-
նում ենք կապիտալիստական շահագործման հնարավո-
րությունը յերկրում:

ԱՐԴՅՈՔ, ՃԻՇՏ Ե ԸՆՏՐՎԱԾ ՄՈՍԵՆՏԸ

Կուսակցությունն արդյուք ճիշտ ընտրեց ամբողջ
Փրոնտով ծախայուն հարձակման անցնելու ժամանակը:

Վորոշ ընկերներ կարծում են, թե կուսակցությունը
սխալվեց մոմենտի գնահատություն հարցում, վոր կուսակ-
ցությունը գերազնահատեց մասսաների հեղափոխական
վերելքը, գերազնահատեց իր նվաճումները, թեբա-
գնահատեց առաջխաղացման դժվարությունները: Վո-
րոշ ընկերներ կարծում են, դեռևս չի հասել դեպի սոց-
իալիզմը արագ մոտենալու շրջանը: Սակայն, այդպես
կարող են հայտարարել միմիայն կարճատև մարզիկ,
վորոնք չեն տեսնում յերկրում աեղի ունեցող վիթխա-
րագույն հեղաշրջումները:

Լենինը մեզ սովորեցնում էր առաջ գնալ ամբողջ
մասսայի հետ միասին՝ սկզբում անսահման դանդաղ,
բայց դրա հետ միասին նա ասում էր, թե իր ժամանա-
կին կոկոսի առաջխաղացման աշխարհի արագացում,
վորի մասին մենք չենք ել յերադում: Աջերը մոռանում
են Լենինյան դրություն յերկրորդ մասը: Սոցիալիզմի
կառուցման կրիայի տեմպերի իդեոլոգները յերադում են
անսահման դանդաղ տեմպերով խաղադրեն ներաճել
սոցիալիզմ: Աջերը չեն տեսնում այն վիթխարի փոփո-
խություններն եկանոմիկայի մեջ, վորոնք հզորագույն
չափերով արագացնում են առաջխաղացումը: Աջերը
չեն տեսնում, թե ինչպես ավելի ու ավելի յեն արագա-
նում միլիոնավոր մասսաների քայլերը դեպի սոցիա-

լիզմ: Բացասելով այդ, աջերը ցանկանում են կասկածի
յենթարկել համատարած կոլեկտիվացման և կուլակո-
թյան, վորպես դասակարգի, վերացման քաղաքա-
նությունը, ամբողջ Փրոնտով հարձակվելու քաղաքա-
կանությունը:

Միայն կյանքից հեռու դանդաղ մարզիկ չեն տես-
նում պրոլետարական մասսաների հեղափոխական խան-
դավառություն վիթխարագույն վերելքը, չեն զգում
պրոլետարական ակտիվություն չտեսնված աճումը:

Միայն իրականությունից կտրված մարզիկ չեն
տեսնում միջակի մասսայորեն դարգացող և անշեղորեն
ամբողջող շարժումը դեպի սոցիալիստական տնտեսու-
թյուն:

Միայն ոպորտունիստական կույրերը չեն տեսնում
հակալական հաջողությունները ինդուստրացման ասպա-
րիզում, խորհանտեսական և կուլանտեսական շինարա-
րություն մեջ, հաջողություններ, վորոնք ապահովելին
միջակ մասսաների արմատական շրջադարձը դեպի սո-
ցիալիզմ:

Միայն կուլակներին խմբակավարները չեն տեսնում,
վոր խորհանտեսություններին և կուլանտեսությունների
պու հացահատիկի պրոբլեմը, փոխադրվելու և ծածկելու
կուլակային արտադրությունը:

Բայց կարող է պատահել, վոր կուսակցություն
ուշ և դիմել ամբողջ Փրոնտով հարձակման. թերևս
պետք էր լսել «ձախ բարրաջողներին, վորոնք բազմիցս
ճարտասանություններ էյին անում կուլակի վրա հար-
ձակվելու մասին: Հայտնի յե, վոր 1925 թ. Կամենյեվն
ու Զինովյեվը բազմիցս աղաղակ բարձրացրին կուլա-
կային ոպարոնայիթի մասին՝ կուլակություն դեմ պայ-

քարոզ անողոք մարտիկի կերպարանք ընդունելով: Գո-
ցե իրոք պե՞տք եր լսել «ձախ» Ֆրադներին հերոսներին
և ա՛յն ժամանակ վճռական հարձակում սկսել կուլա-
կուլթյան դեմ:

Այն ժամանակ ի՞նչ վիճակի մեջ եր դու՛րս: Յան-
քերի տարածությունը հաղթի՜ հասնում եր նախադա-
տերազմյան մակարդակի 75 տոկոսին: Կոլտեսու-
թյուններն ու խորհանտեսությունները փոքրիկ կղզիկ-
ներ եյին մանր-բուրժուական ծովում: Այդ պայման-
ներում կուլակուլթյան դեմ վճռական հարձակում սկսել
կարող են միայն գլուխը կորցրած մարդիկ: Այդպիսի
հարձակումն անխուսափելի կերպով կհանգեր պարտու-
թյան, հարձակման անհաջողության, կուլակի հաղթա-
նակին:

Հայանի յե, վոր 1927 թ. կամենեմք ու Ձինովյեվը
կրկին, այս անգամ արդեն դաշնակցած Տրոցկուն, փոր-
ձեցին կուսակցության վզին փաթաթել կուլակուլթյան
վրա անմիջապես հարձակվելու քաղաքականությունը:
Թերեվս կուսակցությունը սխալ գործեց, վոր չլսեց
Տրոցկի-գլխովյեվական խորհուրդները: 1927 թ. ի՞նչ
ունեյինք մենք գլուխում: Կուլակային տնտեսություն-
ներն արտադրում էին 10 միլիոն տոնն հացահատիկ,
խորհանտեսություններն ու կոլտեսությունները 1 և
կես յերրորդական միլիոն: Կուլակը քաղաք եր կրում
2 միլիոն տոննից ավելի հացահատիկ, իսկ կոլ-
տնտեսություններն ու խորհանտեսությունները տա-
լիս եյին մոտ կես միլիոն տոնն ապրան-
քային հացահատիկ: Յեթե մենք լսեյինք Տրոցկի-գի-
նովյեվական խորհուրդներին, մենք կմեայինք առանց
հացի, անկասկած անհաջողության կմատնեյինք
հարձակումը և կուժեղացնեյինք կուլակի դիրքերը:

1927 թվին կուլակի դեմ վճռական հարձակում գործե-
լով, մենք անխուսափելի կերպով կպարտվեյինք:

Այդպիսի, մերժելով Տրոցկի-գլխովյեվական պա-
հանքները՝ քաղաքականությունը դարձնելու դեպի կու-
լակուլթյան դեմ ծավալուն հարձակումը, նշանակում է,
թե մենք դրանով իսկ հրաժարվեցինք կուլակի դեմ պայ-
քարելուց: Բնավ վոչ: Մենք անչեղորեն վարեցինք կու-
լակուլթյան սահմանափակման և վտարման քաղաքի-
ությունը: Այդ քաղաքականությամբ մենք ամենախիստ
հարվածներ հասցրինք կուլակուլթյան: Որինակ՝ 1928
թվի հացամթերման կամպանիայի ժամանակ կուսակ-
ցությունն ամենասուր հարված հասցրեց գլուխի կուլա-
կային-սպեկուլյանտ տարրերին: Կուսակցությունն այդ
հաջողությամբ կատարեց նրա համար, վոր կարողացավ
ընտրել հարմար, առավել համապատասխան մոմենտ:
1928 թ. կուլակի սպեկուլյատիվ արարքները հսկայա-
կան դժվարություններ ստեղծեցին քաղաքում և գյու-
ղում: Կուլակը սովի սպառնալիքի առաջ կանգնեցրեց
յերկիրը: Ամենալայն մասսաները դպացին, վոր կուլա-
կը ամենաշարժիտ թշնամին է, վորը խախտում է
գործարաններին պարեն հալթայթելու գործը, վորը
ցանկանում է Կարմիր բանակը զրկել հացից: Կուլակին
հասցված այդ հարվածը չաղկապված ե ու պլանատավո-
րության ամենալայն խավերի արյան չափ մոտ, հաս-
կանալի շահերին:

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԼՈՁՈՒՆԳՆԵՐԸ

Բայլեիկյան քաղաքականության վարպետությունն
այն է, վոր լոգունգներ չհնարելով, այլ խորապես
սուսնասիրելով պայմանները, ճիշտ պնդատելով
սակարգային դեմերի փոխհարաբերությունը:



3674 - 89

քանչյուր տվյալ մոմենտին կարողանալ առաջադրել աշխարհի լողունը, վորը հասկանալի լինի մասսաներին, համապատասխանի սրբեկտիվ պայմաններին, նյութական բազա ունենալ իր կենսագործման համար:

1929 թ. վերջում, յերբ սոցիալիստական ինդուստրիայի վիթխարի հաջողությունների հիման վրա հզոր թափով աճեցին կոլտնտեսությունները, բավականաչափ մեծացավ սոցիալիստական հատվածը գյուղում, յերբ չքավոր-միջակային մասսաներն իրենց փորձով համոզվեցին, վոր կուլակի կանգնած է սոցիալիստական շինարարության ճանապարհի առաջ, այն ժամանակ կուսակցությունն առաջադրեց կուլակություն, վորպես դասակարգի, վերացման լողունը համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Ծիծաղելի կլինի այդ լողունը համեմատել վորոշ ընկերների կատարած փորձին՝ IX համագումարում կուսակցության վրին փաթաթելու կուլակային տնտեսությունների ազգայնացման լողունը: Այն ժամանակ այդ լողունը ցնորք էր: Կուլակային տնտեսությունների ազգայնացման քաղաքականությունն այն ժամանակ հավասարազոր էր ավանտյուրիզմի: Այն ժամանակ դավեշտական այդ քայլից կատարվեց չափազանց մոլորված մի կացություն և ուրիշ վոչինչ:

«Այստեղ ասացին՝ մատնանշում է Լենինը կուսակցության IX համագումարում արտասանած իր ճառում, — յեթե կալիտալիստներին ազգայնացրեցինք, ապա ինչո՞ւ չի կարելի ազգայնացնել կուլակներին: Բայց ի դուր չե, վոր այդ փաստարկումն այստեղ հրճվանք առաջացրեց: Արդարեւ, ինչպե՞ս էլ վոր հաշվելու յինենք հա՞րսոտ գյուղացիներին, վորոնք չեն տպրում ա-

ռանց ուրիշի աշխատանքը չահագործելու, այնուամենայնիվ, նրանք կես միլիոնից սրակառ չեն և թերևս նույնիսկ մոտ մեկ միլիոն են: Մենք ինչպե՞ս կարող ենք նրանց ազգայնացնել: Այդ ցնորք է: Դրա համար մենք այժմ ուժ չունենք»^{*)}:

«Չախականներն» էլ հենց նրանով են աչքի ընկնում, վոր լողունդներ են առաջադրում առանց հաշվի տունելու ուժերը, առանց դրություն ճիշտ գնահատություն կատարելու: «Չախական» լողունդները թվում են գեղեցիկ, հեղափոխական, արեցուցիչ, բայց իրենց վտանգի տակ նրանք վոչ մի հող չունեն:

Յեթե «ձախականներին» բնորոշ է առաջ վազելը, լողունդներ՝ առաջ մղելը, վորոնց իրականացման համար անհրաժեշտ է անցնել մի շարք ստորձաններ, մի շարք նախապարպատական փուլեր, ապա աջ ուղորդունիստները սովորաբար առաջադրում են աշխարհի լողունդներ, վորոնք տվյալ մոմենտում արդեն հնացած են, վորոնք իմաստ ունեյին անցած փուլի վրա: Աջերը սովորաբար չեն կարողանում ընտելանալ իրերի նոր դրություն, նոր պայմանների, պատմության շրջադարձի հետ: Աջերը չեն հասկանում, վոր այն լողունը, վորը ճիշտ էր յերեկ, հաճախ իր իմաստը կորցնում է այսօր:

Ուղորդունիստները չեն բմբոսում բայլչեիկյան ուղղափառությունն ու տակտիկան: Նրանք չեն հսկանում, վոր յուրաքանչյուր լողունը պետք է կատարելապես համապատասխանի պատմական տվյալ մոմենտի առանձնահատկությունների ամենաճշգրիտ, սրբեկտիվ կերպով ստուգված գնահատության, կատարելապես համապատասխանի դասակարգային ուժերի փոխհարաբե-

րության: Նրանք չեն հասկանում, վոր դատակարարային ուժերի փոխհարաբերությունը պետք է գիտել վոչ թե քարացած վիճակում, այլ չարժման մեջ:

Ոպորտունիստները չեն հասկանում, վոր.

«Բայլչեիկյան քաղաքականության վարպետությունը բնավ այն չէ, վոր առանց ընտրության կրակենք բոլոր թնդանութիւններից բոլոր ֆրոնտներում, հաշվի չնստելով ժամանակի պայմանների և տեղի հետ, հաշվի չնստելով այն րանի հետ, թե արդյոք մասսաները պատրաստակա-նություն ունեն ոժանդակելու ղեկավարության այս կամ այն քայլին: Բայլչեիկյան քաղաքակա-նության վարպետությունն այն է, վոր կարողանանք ընտրություն կատարել ժամանակի և տեղի մեջ և հաշվի առնել գործի բոլոր հանգու-մանքները, վորպեսզի կրակը կենտրոնացնենք այն ֆրոնտում, վորտեղ ամենից չուտ կարելի էլինի առավելագույն հետևանքներ ձեռք բերել»^{*)}:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ, ՎՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱ- ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՂԱԿ

Կուսակցությունն իր բոլոր աշխատանքների մեջ մշտապես պահպանել է բայլչեիկյան այն սկզբունքը, վորի համաձայն պետք է ընտրել հիմնական ողակը, վորը հնարավորություն է տալիս պահպանելու ամբողջ շղթան: Այդ կանոնով ղեկավարվելով, մեր կուսակցու-թյունը հաջողությամբ լուծեց նաև գյուղի սոցիալիս-տական վերակառուցման հիմնական պրոբլեմները:

^{*)} Сталин, О работах апрельского объединенного пленума ЦК и ЦКК, № 30 31. Гиз, 1928 г.

Մի քանի տարի սրանից առաջ ժողովրդական տնտե-սության զարգացման մեջ ամենանեղ տեղն այն եր, վոր գյուղատնտեսության տեմպերը չափազանց յետ էլին մնում ինդուստրացման զարգացման տեմպերից: Այդ յետ մնալը արդենք հանդիսացավ յերկրի ժողովրդական տնտեսության հետագա զարգացման համար:

Գյուղատնտեսությունը բարձրացնելու, նրա ծալ-րահեց յետամնացությունը վերացնելու համար պետք էր գտնել հիմնական ողակը, վորը բռնելով՝ մենք կա-րողանայինք պահպանել ամբողջ շղթան, այլինքն՝ գըր-նել մի բնագալառ, վորտեղ ձեռք բերած հաղթանակը մեզ հաղթանակ բերեր գյուղատնտեսական ֆրոնտի բո-լոր բնագավառներում:

Այդպիսի ողակ հանդիսացավ հացահատիկային տնտեսության պրոբլեմը: Չի կարելի բարձրացնել տեխ-նիկական կուլտուրաների արտադրությունը՝ տեխնի-կական կուլտուրաներով զրազվող շրջանները չապահովե-լով անհրաժեշտ քանակությամբ եթան հացով: Մինչև տեխնիկական կուլտուրաների շրջանները չմտապարար-վեն բավարար քանակությամբ հացահատիկով, նրանք անխուսափելիորեն պետք է զրազվեն նաև հացահատի-կային տնտեսությամբ, չնայած այդ շրջաններում ձեռ-կային տնտեսությամբ կուլտուրաներով: Մինչև այդ շրջանների գյուղացիք մտած չլինեն, վոր հարկ յեղած մոմենտին իրենք կստանան բավարար քանակու-թյամբ եթանագին հացահատիկ՝ նրանք իրենց ամբողջ ուշադրությունը չեն դարձնի տեխնիկական կուլտուրա-նեքի արտադրության վրա, այլ կձգտեն ինքնուրույն կերպով ապահովել իրենց հացով: Այդ պատճառով տեխնիկական կուլտուրաների պրոբլեմը լուծելու հա-մար անհրաժեշտ է լուծել հացահատիկի պրոբլեմը:

Նույն պատկերը գոյութիւն ունի նաեւ անասնապա-
հութեան ստղարիդում: Անասնապահական շրջաններին
բախարար քանակութեամբ եթանագին հայ չհայթայթե-
լով, մենք չենք կարող այնպէս անել, վոր գյուղացիք
իրենց ամբողջ ուշադրութեամբ հատկացնեն այդ շրջան-
ներում հատկապէս ամենաճեղճտու, գյուղատնտեսու-
թեան ամենաարդյունավետ ճյուղին: Առանց դրա մենք
չենք կարող հարկ յեղած չափով բարձրացնել անասնա-
պահական տնտեսութեան արդյունավետութեանն ու
ապրանքայնութեանը:

Այսպիսով, չի կարելի լուծել մեր հարցը, չի կարե-
լի լուծել անասնապահական պրոբլեմը՝ չլուծելով հա-
ցահատիկային տնտեսութեան պրոբլեմը:

«Դուք ե գալիս, վոր հացահատիկի պրոբլե-
մը, —ասում էր րնի. Ստալինը կուսակցութեան
XVI համագումարում, —հիմնական ուղի է հան-
դիսանում գյուղատնտեսական սիտեմի մեջ և
մի բանայի՝ նրա մյուս բոլոր պրոբլեմների լուծ-
ման համար: Դուք ե գալիս, վոր հացահատիկի
պրոբլեմի լուծումը հերթական տեսակետից ա-
ռաջին խնդիրն է գյուղատնտեսութեան մյուս
պրոբլեմների շարքում»:

Հացահատիկի պրոբլեմը ճիշտ լուծելու համար
պետք էր հատկանալ հացահատիկային դժվարութիւն-
ներին իսկական պատճառները: Աջ ուղորդութիւնները
գժվարութիւնների պատճառը տեսնում էին գյուղա-
տնտեսութեան կանգ առնելու և անկման մեջ: Բայց այդ
ուղորդութիւնները միմիայն կրկնում էին իրականու-
թեան հետ վոչ մի կապ չունեցող կուլակային զրպար-
տութիւնները:

Իրականութեան մեջ աճում էր մեր ցանքերի տարա-

ծութիւնը, մենք հասել էինք ցանքերի տարածութեան
նախապատերազմյան մակարդակին: Գյուղատնտեսու-
թիւնը դեպքադացիայի չէր յենթարկւում, չէր քայ-
քայվում, այլ աճում, բարձրանում էր:

Սակայն, չնայած գյուղատնտեսութեան աճման,
չուկա հանվող հացահատիկի քանակութիւնը պակաս էր
նախապատերազմյան շրջանից:

Գյուղատնտեսութեան ապրանքայնութիւնը, այս-
ինքն՝ հացահատիկի այն քանակութիւնը, վոր դնում
էր վոչ թե ներքին սպառման, այլ վաճառքի համար,
բալականաչափ կը ճատվէր: Այդ բացատրվում էր նախ
և առաջ գյուղատնտեսութեան մանրացումով: Այդ բա-
ցատրվում էր նրանով, վոր Հոկտեմբերյան հեղափոխու-
թեան հետեանքով առավել ապրանքային խոշոր կալվա-
ծատիրական և կուլակային տնտեսութիւններին փոխա-
րինեցին ավելի քիչ ապրանքային, մանր և միջակ տն-
տեսութիւնները:

Պատերազմից առաջ հիմնական հայ վաճառողները
կալվածատիրական և կուլակային տնտեսութիւններն
էին: Ծուկա գնացող յուրաքանչյուր 100 տոնն հացա-
հատիկից 75 տոննը կուլակային և կալվածատիրական
տնտեսութիւններէից էին:

Հեղափոխութիւնից հետո հացահատիկի հիմնական
արտադրողներն են դառնում արգելի վոչ թե կալվածա-
տերերն ու կուլակութիւնը, այլ մանր և միջակ գյու-
ղացիութիւնը: Սակայն մանր և միջակ գյուղացիք պա-
տերազմից առաջ ևս չուկա էին հանում քիչ քանակու-
թեամբ հացահատիկ: Հեղափոխութիւնից հետո չք-
վոր-միջակային տնտեսութիւնները, ազատազրկելով
կալվածատերերի կեղեքումից և հիմնականում կտրե-
լով կուլակութեան ուժը, հնարավորութիւն ստացան

բավականաչափ բարելավելու իրենց նյութական բարեկեցությունը, սկսեցին ավելի շատ հաց սպառել իրենց տնտեսության մեջ և քիչ հացահատիկ հանել շուկա:

1913 թ. չքավոր-միջակային տնտեսություններն արտադրել են 41 միլիոն 500-000 տոնն հացահատիկ: 1926-27 թ. չքավոր-միջակային տնտեսություններն արդեն արտադրել էին 67 միլիոն 500-000 տոնն: Սակայն, յեթե առաջ չքավոր-միջակային տնտեսությունները չուկա ելին հանում իրենց արտադրանքի 14,7 տոկոսը, ապա 1926-27 թ. նրանք հանել են իրենց արտադրանքի միայն 13 տոկոսը: Այսպիսով, հացահատիկային դժվարությունների պատճառն այն էր, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բավականաչափ մանրացան դյուղացիական տնտեսությունները (դյուղացիական ծրխերի թիվն ավելացավ մոտ 10 միլիոնով), իսկ մանր տնտեսությունն ամենաքիչ ապրանքայնություն ունեցող տնտեսությունն է:

Հացահատիկային դժվարություններից դուրս գալու՝ հացահատիկի պրոդուկտի յուժման միջոցը գյուղացիական տնտեսության ամրացման ուղին է: Բայց կա խոշոր տնտեսության դարգացման յերկու ճանապարհ: Կարելի չե կանգնել խոշոր կուլակային կապիտալիստական տնտեսության գերգացման ճանապարհի վրա: Մեղ հատկապես զեպի այլ ճանապարհն էլին քարշ տայիս աջ ոպորտունիստները: Նրանք գտնում էլին, վոր հացահատիկային դժվարություններից ազատվելու յեկըր կուլակային հարուստ տնտեսության դարգացումն է: Այլ ոպորտունիստներն քստ էյության դյուղատնտեսությունը հրում էլին զեպի կապիտալիստական ուղին, վորն անխուսափելի կերպով տանում է զեպի դյուղի հիմնական մասսաների աղքատացում: Այլ ուղին անխուսափե-

լիորեն նշանակում է պրոդուկտական հեղափոխության կործանում: Կուսակցությունը ջախջախեց կուլակային ծրագիրը պաշտպանող այլ ոպողիցիային: Կուսակցությունը կանգնեց պրոդուկտական դիկտատուրայի համար միակ ուղիղ և միակ ընդունելի ճանապարհի վրա, վորպիսին մանր դյուղացիական տնտեսությունները խոշոր հանրայնացված կուլեկտիվ տնտեսությունների մեջ համախմբելու ճանապարհն է:

Կուսակցությունը գտնում էր, վոր դժվարությունները յեկըր կոլտնտեսությունների և խորհանտեսությունների ուժգին շինարարության ուղին է: Այլերը պայքարում էլին կուլեկտիվացման և խորհանտեսական շինարարության քաղաքականության զեմ: Նրանք առում էլին, թե կոլտնտեսական շինարարության հատկացված փողը «զեն չպրտված փող է»: Նրանք գտնում էլին, վոր խորհանտեսությունների շինարարությանից վոչինչ դուրս չի դա: Կյանքը անողոր կերպով ծիծաղեց այլ ոպորտունիստների վրա:

Նոր խորհանտեսություններ կառուցելով, մենք յենթադրում էլինք, թե նրանք 1931-32 թ. կտան մոտ 1 և կես միլիոն տոնն ապրանքային հացահատիկ: Իրականության մեջ մենք ստանում ենք 3 միլիոն տոննից ավելի: Հնգամյա պլանով խորհանտեսություններում մենք պետք է ունենայինք 5 միլիոն հեկտար ցանք, իսկ իրականում մենք զեռ ներկա տարվա (1931) վերջում խորհանտեսություններում ունենալու յենք 9 և կես միլիոն հեկտար տարածությամբ ցանք, այսինքն՝ հնգամյակի զեռ յերրորդ տարում մենք զերականադրելու յենք խորհանտեսական շինարարության հնգամյա ծրագիրը:

Հնգամյա պլանով մենք նախատեսում էլինք կոլտնտեսություններում ունենալ 20 միլիոն հեկտար, իսկ

իրականութեան մեջ կոլտնտեսութեաններում մենք արդեն ունենք 43 միլիոն հեկտար: Այսպիսով, կոլտնտեսական շինարարութեան հնդամյա ծրագիրը մենք յերկու տարվա ընթացքում գերակատարել ենք ավելի, քան յերկու անգամ:

Պրոլետարական պետութեանն այժմ հնարավորութեան ունի հենվելու գյուղի ու գինորեն աճած սոցիալիստական հատվածի՝ կոլտնտեսութեանների և խորհրդային տնտեսութեանների վրա, վորոնք այժմ արդեն տալիս են հացահատիկի ասլրանքային արտադրանքի հիմնական մասը:

Մենք հիմնականում լուծել ենք հացահատիկի պրորբլեմը և լուծել ենք սոցիալիստական խոշոր տնտեսութեան ուղղութեամբ:

Հացահատիկի պրորբլեմի լուծումը հիմնականում՝ մեզ հնարավորութեան է տալիս անցնելու գյուղատնտեսական Փրոտի մյուս ճակատամասերին՝ զիմելու տնտեսագիտական պրորբլեմի և տեխնիկական կուլտուրաների պրորբլեմի լուծման:

Դրա հետ միասին հացահատիկի պրորբլեմի լուծումը մեզ մատնացույց է անում գյուղատնտեսութեան մյուս պրորբլեմների լուծման ուղին և հիմնական մեթոդը:

«Այժմ, յերբ արդեն հիմնականում լուծել ենք հացահատիկի պրորբլեմը, մենք միաժամանակ կարող ենք ձեռնարկել նաև տնտեսագիտական պրորբլեմի լուծման, վորը ներկա մոմենտին հանդիսանում է հրատապ մի պրորբլեմ և տեխնիկական կուլտուրաների պրորբլեմի լուծման: Այդ պրորբլեմների լուծման ժամանակ մենք պետք է ա-

ռաջ դնանք նույն ճանապարհով, վորով դեպքեր հացահատիկի լուծման ընդառնում, այսինքն՝ խորհրդային տնտեսութեանների և կոլտնտեսութեանների կազմակերպման միջոցով, վորոնք հանդիսանում են մեր քաղաքականութեան հենակետերը, աստիճանաբար կերպարանափոխենք ներկայիս մանր-գյուղացիական անասնապահութեան և տեխնիկական կուլտուրաների տեխնիկական և տնտեսական հիմքը»^{*)}:

Անասնապահութեան պրորբլեմի և տեխնիկական կուլտուրաների պրորբլեմի լուծումը հնարավոր է միմիայն խորհրդային տնտեսութեանների շինարարութեան և գյուղացիական տնտեսութեան կոլեկտիվացման ճանապարհով:

Ո՞ՒՄ ՎՐԱ ՀԱՐՁԱԿԵԼ

Ոպորտունիստները համաձայն չեն բաղձելիկյան հարձակման որենքների հետ: Ոպորտունիստները չեն հասկանում, վոր բաղձելիկյան հարձակումը չի կարելի շփոթել հարձակման խաղի հետ, վոր չի կարելի հարձակվել անհիմն կերպով, առանց պահեստի ուժեր չտեղծելու, վոր առանց նմանված զիբքերն ամբացնելու հարձակումը մատնված է անհաջողութեան:

Հարձակումը հաջող կատարելու համար անհրաժեշտ է ունենալ հարձակման ընդհանուր պլան, իմանալ ստալիստացման հիմնական ուղղութեանը, հիմնական ճանապարհը: Լենինյան քեռրիան պրոլետարիատի հարձակվող ջոկատներին տալիս է.

^{*)} Ստալին. Կենտկոմի հ. զվեալութեանը 16-րդ համագումարին:

«Կողմնորոշվելու վստահության ուժ և շըր-
ջակա անցքերի ներքին կապի ըմբռնություն, վո-
րովհետեւ նա, և միմիայն նա կարող է ոգնել պը-
րակտիկայում ըմբռնելու վսչ միայն այն, թե
ինչպես և ուր են շարժվում դասակարգերը ներ-
կայումս, այլ և այն, թե ինչպես և ուր պետք է
ներանք շարժվեն մոտ ապագայում»*) :

Նրանք, վորոնք պատրաստ են լենինյան թեորիայի
հզար լուսարձակը փոխելու ոպորտունիստական գաղա-
փարների ազոտ ճրագով, առաջին իսկ քայլերից հետո
անխուսափելի կերպով կզբորվեն ցած :

Ծիշտ և հաջող հարձակվելու համար պետք է ճըլ-
զրիտ իմանալ, թե ում հետ ես պայքարում, ով է թըշ-
նամիդ, պետք է ճշգրիտ իմանալ, թե հարձակման դեպ-
քում ով է քեզ ոգնում, ով է քո դաշնակիցը : Ոպորտու-
նիստների գժրախուսությունը հատկապես այն է, - վոր
ներանք չեն կարողանում դաշնակիցը տարրերել թչնա-
մուց :

Այլ ոպորտունիստները չեն գիտակցում, վոր կուլա-
կուլությունը սոցիալիզմի հիմնական թչնամին է մեր յերկ-
րում : Այլերը չեն ըմբռնում, վոր կուլակուլությունը մա-
հացու, անհաշտ և գեռես վերջնականապես չճախճախ-
ված թչնամին է, վորը կենաց և մահու պայքար է մղում
պրոլետարիատի դեկտատուրայի դեմ : Այլ յերգվյալ
թչնամուն աջ ոպորտունիստները պատրաստ են իրենց
դաշնակիցը համարելու : Նրանք դռնում են, վոր կու-
լակը շահագրգռված է պրոլետարական դեկտատուրայի
ամրացմամբ, վոր նա խաղաղորեն կներաճի սոցիալիզմ
և վոր կուլակի թոռը մեզ կասի՝ շնորհակալություն :

*) Сталин. Вопросы ленинизма, стр. 82.

վոր մենք այդպես լավ ենք վարվել նրա պապի հետ :
Պարզ է, վոր այնպիսի ելումուկաւարների հետ, վորոնք
մեր յերգվյալ քչնամիներին բարեկամի տեղ են ընդու-
նում, չի կարելի հաջող հարձակում գործել կապիտա-
լիստական տարրերի վրա :

«Ձախ» ոպորտունիստները չեն ըմբռնում, վոր մի-
ջակը պրոլետարիատի դաշնակիցն է սոցիալիզմի հա-
մար մղվող պայքարում : «Ձախ» ոպորտունիստները մի-
ջակ գյուղացիություն վրա նայում են, վորպես պրո-
լետարական դեկտատուրայի թչնամի մի ուժի, վորն
անխուսափելի կերպով պետք է թչնամական ընդհարում
ունենա պրոլետարիատի հետ, և ալլ հակասություն-
ներից ազատվելու յեղքը գտնվում է միջադեպին շըր-
ջանակներում : Այստեղից են բղխում արացիկառական
պարապ խուսակցություններն այն մասին, վոր միջադ-
եպին հեղափոխության հաղթանակին սպասելով, մենք
պետք է անուղք շահագործման յեթարկենք գյուղացի-
ություն, գյուղից դուրս ծծենք այն ամենը, ինչ հա-
րավոր է տեխնիկային :

«Ձախ» խտորումները յուրատեսակ մի փորձ եյին
դործնականում անդիտակցարար իրականացնելու արոց-
կիզմի հակամիջակային տեսությունները : Իսկ յերր
կուսակցությունն ամբողջ ուժով հարվածեց այն խրմ-
րակներին, վորոնք հակառակ կուսակցության կատա-
րելապես հատակ և ուղղակի դիրեկտիվներին կանդնեցին
միջակի դեմ պայքարելու ճանապարհի վրա, ոպորտու-
նիստները վայնասուն յարձրացրեցին, թե մենք իբրի
թե նահանջում ենք :

Նրանք չեն հասկանում, վոր սոցիալիստական հար-
ձակումը մի հարձակում է կապիտալիստական տարրերի

վրա, նրանք չեն ըմբռնում, վոր այդ հարձակումը հաջող կլինի միմիայն այն ժամանակ, յերբ մենք այն մըդենք միջակի հետ միասին: Միջակի վրա հարձակվելը, միջակի դեմ պայքարելը ուղղակի սղոթութուն է մեր դասակարգային թշնամուն: Հարվածել միջակին, նշանակում է կորցնել դաշնակցին, նշանակում է դաշնակցի անցումը մեր դասակարգային թշնամու կողմը:

Պարզ է, վոր այնպիսի հրամանատարներին հետ, վորոնք դաշնակիցներին ընդունում են քշմամիներին տեղ, վորոնք դաշնակիցներին մղում են դասակարգային քրշմամու գիրկը, չի կարելի հաջող հարձակում գործել հանուն սոցիալիզմի:

ՅԵՏ ԶՄՆԱԼ, ԱՌԱՋ ԶՎԱԶԵԼ

Այլ է «ձախ» սպորտունիստները չեն ըմբռնում, վոր սոցիալիզմի հաջող հարձակումը հնարավոր է միայն այն դեպքում, յեթե մեր ջոկատները կանգ չառնեն անցած փուլերի վրա, այլև չցատկեն դեռևս չանցած փուլերի վրայից:

Այլը սովորաբար անհրաժեշտ չեն համարում անցնելու հաջորդ փուլը: Այլը սովորաբար մնում են արդեն անցած աստիճանների վրա:

Հայտնի չէ, վոր նեպի առաջին շրջանում քաղաքի և գյուղի գոյումը հենվում էր գյուղացիության անհատական պահանջների բավարարման վրա: Մենք առաջին շրջանում գյուղ էլինք ուղարկում գլխավորապես կոչկեղեն, մանուֆակտուրա և այլն: Այդ անհրաժեշտ էր և խնստությանի նեպի առաջին շրջանում: Բայց այդ առաջին շրջանին փոխարինեց յերկրորդը՝ յերբ գյուղին այլևս չէին բավարարում յայն սպառման

առարկաները, յերբ գյուղը պահանջում էր գյուղատնտեսական մեքենաներ և արտադրական այլ գործիքներ: Անհրաժեշտ էր անցնել գոգման նոր՝ արտադրական ձևերի: Այլը համարում էր կարականապես մերժում էլին գոգման նոր ձևերը, փորձելով մեղ հետ քաշել դեպի հին սպառողական ձևերը:

Այլ սպորտունիստական՝ յետ մնալու և ձախահան՝ առաջ վազելու տրամադրությունները չափազանց վառ կերպով արտահայտվում են կոլտնտեսական շարժման մեջ: Վորոչ ընկերներ տեղերում հանդես ելին գալիս ընդդեմ արտելների, փորձելով կոլտնտեսական շարժումը պահել հողոգտագործման ընկերությունների շրջանակներում, վորոնք հացահատիկային հիմնական շրջաններում արդեն անցած փուլ են հանդիսանում: Դրա հետ միասին կան ձախական տրամադրություններ՝ ցատկելու դեռ չանցած փուլի վրայից՝ հողոգտագործման ընկերություններից թռչելու ուղղակի միջոցով կոմունա, արհամարհելով սովյալ շրջանում կոլտնտեսական շարժման հիմնական ձևը՝ հանդիսացող արտելը: Կատարելապես պարզ է, վոր դեռևս չանցած փուլի վրայից կատարվող աջդիմի ցատկումը անխուսափելի կերպով հանդում է անկման, կարող է միայն դադարեցնել շարժումը և նրան յետ մղել:

ՄԻԼԻՈՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Բայլչեվիկյան ղեկավարության վարպետությունն այն է, վոր մասսաներին նրանց ինկ փորձով կարողանան համոզել, վոր բայլչեվիկյան քաղաքականությունը ճիշտ քաղաքականություն է:

Վլադիմիր Իլյիչը բազմիցս ընդդոմ էր, վոր մենք չգիտենք, թե վորն է սոցիալիզմի ճանապարհը՝ իր բոլոր մանրամասնություններով: Նա ասում էր,

Վոր Ժենը Գրեները ճանապարհի ուղղութիւնը, Ժենը
Գրեները, Թե ինչ դաստակարգային ուժեր ինչ ուղղու-
թիւնով պետք է գնան և վոր սոցիալիզմի կառուցման
կոնկրետ ուղիները պետք է ոտուգմեն միլիոններ
փորձով :

«Այն բոլորը, ինչ մենք գիտեցինք, ինչ եւ ճշգրիտ մատնացուցց ելին անուամբ կոստիրտալիստական հասարակութեան քաջամուտ մարդիկ, ամենախնոք զուտները, վորոնք նախատեսել ելին նրա կործանումը, այդ այն եւ, վոր վերակառուցումը պատմական անխուսափելիութեամբ պետք եւ անդի ունենա այսինչ խոշոր դժով, վոր արտագրութեան միջոցների մասնավոր սեփականատիրութեանը դատապարտված եւ պատմութեան կողմից, վոր նա կայլթի, վոր չահագործողներն անխուսափելի կերպով պետք եւ յենթարկվեն եքսպրտպրիացիայի։ Այդ հաստատված եր գիտական ճշտութեամբ, եւ մենք այդ գիտեցինք, յերբ մեր ձեռքը վերցրեցինք սոցիալիզմի պրոչակը, յերբ մենք մեզ հայտարարեցինք սոցիալիստներ, յերբ հիմնում ելինք սոցիալիստական կուսակցութեաններ, յերբ մենք վերակառուցում ելինք հասարակութեանը։ Այդ մենք գիտեցինք, յերբ իշխանութեանը վերցրեցինք, վորպեսզի սկսենք սոցիալիստական վերակազմութեանը։ Բայց վոչ վերակառուցման ձեւը, վոչ կոնկրետ վերակազմութեան պարզացման տրադութեան տեմպը մենք չեցինք կարող իմանալ։ Միայն կուեկտիվ փորձը, միայն միլիոնների փորձը կարող եւ այդ տեսակետից վճռական ցուցումներ տալ, հատկապես այն պատճառով, վոր մեր գործի, սոցիալիզմի կառուցման գործի համար անբավարար եւ վերին խափերի այն հարյուր հազարավորների փորձը, վորոնք պատմութեանը կոփե-

են մինչեւ այժմ: Մենք այդ անել չենք կարող հաս-
կապես այն պատճառով, վոր մենք նկատի ունեն-
միասնական վորճը, միլիոնավոր աշխատավորների
սիրճը»^{*}):

Կոմունիզմի մեծ ուսուցիչներ Մարքսը և Ենգելսը նշել են դեպի սոցիալիզմ գնալու ընդհանուր ուղին։ Դրա հետ միասին նրանք հանձարեղ կերպով նախատեսել են պայքարի մի շարք կոնկրետ ձևեր։ Հայտնի չէ, վոր Մարքսը և Ենգելսը մատնանշել են, վոր կոմունիստական տնտեսության անցնելիս լայնորեն օգտագործվելու չէ կոոպերատիվ արտադրությունը։ Մարքսը և Ենգելսը տեսնում էին, վոր գյուղի հիմնական մասնակցերը հատկապես կոոպերացիայի միջոցով կհասնեն արտադրության սոցիալիստական յանակին։ Ենգելսն ասում էր, վոր մենք յուրաքանչյուր գյուղացու հնարավորություն կտանք մտածելու իր հողակտորի վրա, նախքան խոշոր հանրայնացված տնտեսության անցնելը։ Նա ասում էր, վոր գյուղացիք սմբողջ գյուղերով պետք է անցնեն միատնական հողագտադրածման։

Խնդիրն այն եր, վոր մատաների փորձով, մի-
լիոնների փորձով ստուգվեն այդ ձեվերը, վորոնք հա-
խապես պատկերվել են մեր մեծ առաջնորդների գլուխ-
ներում: Մեր կուսակցության վրա, վորին անմիջակա-
նորեն ղեկավարում եր Լենինը, պատմական մեծագույն
խնդիր դրվեց՝ շտապել ղեպի սոցիալիզմ առաջանալու
կոնկրետ ուղիները և ստուգել դրանք միլիոնների փոր-
ձով: Մեր կուսակցության վրա դրվեց համաշխար-
հային պատմության մեջ մեծագույն մի գեր՝ գտնել
և ստուգել սրբոյնարիաւոր և գլուղացիության հա-

*) Ленин т. XXIII, стр. 40.

մաքործակցութեան կոնկրետ ուղիները սոցիալիզմի կառուցման գործում:

«Համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան, վորպէս միասնական պրոցեսի տեսակետից Ռուսաստանի ապրած ներկա դարաշրջանի նշանակութիւնն այն է, վոր գործնականապէս ստուգվի և փորձվի պետական իշխանութիւնն իր ձեռքում պահող պրոլետարիատի քաղաքականութիւնը մանր-բուրժուական մասսայի վերաբերմամբ»^{*)}:

Մենք պետք է ստուգելինք գյուղացիութեան միջոնավոր մասսաների գեպի սոցիալիստական աշխատանք անցնելու կոնկրետ ուղիները: Լենինը բազմիցս ընդգծում էր, վոր պետք է անցնի վորոշ ժամանակամիջոց, մինչև վոր գյուղի հիմնական մասսաներն ազատագրվելով կալվածատերերից և բուրժուազիայից, բմբռնեն վոչ թէ գոթերից, այլ իրենց սեփական փորձով, վոր կոլեկտիվ տնտեսութիւնից բացի յեւք չկա կարիքից և քայքայումից: Խնդիրն այն էր, վոր գործնականապէս ապացուցվի խոշոր սոցիալիստական տնտեսութեան առավելութիւնը, վոր գյուղի հիմնական մասսաները կամավոր հիմունքներով համախմբվեն կոլեկտիվ տնտեսութիւնների մեջ:

Ներկա մոմենտի նշանակութիւնն այն է, վոր գյուղի հիմնական մասսաներն արդեն իրենց փորձով հասկացել են խոշոր կոլեկտիվ տնտեսութեան առավելութիւնները և արդեն իրենց յերեսը դարձրել են դեպի կոլտնտեսական շարժումը:

Գյուղի հիմնական մասսաների այդ շրջադարձը դեպի կոլտնտեսական շարժումը միանգամից տեղի չունեցավ: Այդ շրջադարձը նախապատրաստվել է մեր սո-

ցիալիստական շինարարութեան ամբողջ ընթացքով: Նա պատրաստվել է սոցիալիստական խոշոր արդյունաբերութեան զարգացմամբ, վորը նյութական-տեխնիկական բազա ստեղծեց կոլեկտիվացման համար: Նա պատրաստվել է գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմամբ, վորի մեջ գյուղացիք գործնականապէս սովորեցին կոլեկտիվ աշխատանք կատարել: Նա պատրաստվել է կոլտնտեսութիւնների ցանցով և խորհրատային և կոլտնտեսութիւնների ցանցով և խորհրատնտեսութիւնների շինարարութեամբ, վորոնք ակնհայտ էր կերպով գյուղացիներին ցուցադրեցին խոշոր տնտեսութեան առավելութիւնները: Նա պատրաստվել է կուլակութեան դեմ մղված վճռական և անողոք պայքարով:

Կուսակցութեան ճիշտ քաղաքականութեան հետեւանքով մասսաներն իրենց փորձով համոզվեցին կոլեկտիվ աշխատանքի առավելութիւնների մեջ, և կուսակցութեան լոկուտները դարձան մասսաների լույսնաբեր: Գյուղի հիմնական մասսաները լայն հոգունքով առաջ շարժվեցին դեպի խոշոր հանրայնացված տնտեսութիւն: Վե՞րջին յերեք տարում կոլտնտեսութիւնների ցանքերի տարածութիւնն աճել է ափսոսելի, քան քառասուն անգամ: Մեր կոլտնտեսութիւնների ցանքերի տարածութիւնը հափառար է Ֆրանսիայի և Իտալիայի ցանքերի ամբողջ տարածութիւնը՝ մասին վերցրած: Հնգամյա պլանով նախատեսվում էր, վոր հիգաւնյակի վերջում կոլտնտեսութիւնները կտան 190 միլիոն ցենտներ հացահատիկային արտադրանք: Իսկ իրականութեան մեջ պարզվում է, վոր դեռ այս տարի կոլտնտեսութիւնները կտան 256 միլիոն ցենտներ: Այսպիսով, հնգամյակը գերակատարված է

^{*)} Ленин. т. XVIII, ч. 1. стр. 314.

2 տարում: Հացահատիկային հիմնական շրջաններում տնտեսութունների հիմնական մասն արդեն համախմբված է կոլտնտեսութունների մեջ: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս կուսակցությանը հայտարարելու՝ հնգամյակի վերջում՝ յերկրի համատարած կոլեկտիվացումն ավարտելու լոգունգը: Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս կուսակցությանն իր առաջ հարց դնելու, վոր ներկա (1931) տարում կոլեկտիվացվի հացահատիկային հիմնական շրջանների տնտեսութունների վոչ պակաս, քան 80 տոկոսը, հացահատիկային մյուս շրջանների տնտեսութունների 50 տոկոսը և սպառող շրջանների՝ 20-25 տոկոսը: Այս պլանի իրագործումը նշանակելու յե գյուղատնտեսութան սոցիալիստական հատվածի հաղթանակը:

«Կոլտնտեսութունների ուղին այլևս անհայտ և չհետադոտված ուղի չէ: Նա հազար կերպ քննված և ստուգված է իրենց իսկ գյուղացիական մասսաների կողմից: Քննված և զնահատված է, վորպես նոր միջոց, վորը գյուղացիներին ազատագրում է կուլակներին ստրկանալուց, կարիքից, խավարից» (Ստալին):

Այս նշանակում է, վոր մենք գտել և վործով ըստուգել ենք գյուղացիության հիմնական մասսաների սոցիալիզմին անցնելու կոնկրետ ձեվերը:

Այս նշանակում է, վոր «վոչ միայն տեղականորեն ապացուցված է, այլև միլիոնավոր մարդկանց փորձով ստուգված է, վոր պրոլետարիատի գիլկոտատուրայի պայմաններում հնարավոր է հետամնաց սակավ արտադրողականութուն ունեցող, մանր և մանրագույն գյուղացիական անհատական տնտեսութունից անմիջ-

ջականորեն անցնել խոշոր, կոլեկտիվ, բարձր արտադրողականութուն ունեցող տնտեսութան» (կուսակցութան 16-րդ համագումարի բանաձեվը):

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ

Կուլակության շահադիտական ձգտումների սահմանափակման քաղաքականութունից մենք անցանք գյուղական շահագործող դասակարգի վերացման քաղաքականության: Մենք յերկրի բոլոր շրջաններում այդ լոգունգի պրակտիկ գործադրութանը միաժամանակ չձեռնարկեցինք: Կուլակութան վերացման քաղաքականության իրականացման հիմնական մեթոդը համատարած կոլեկտիվացումն է:

Հետամնաց շրջաններում, այնտեղ, ուր թույլ է շարժացած կոլտնտեսական շարժումը, մենք շարունակում ենք սահմանափակել և վտարել կուլակութանը: Վորքան հաջող զարգանա կոլտնտեսական շարժումը, վորքան ուժեղանա համատարած կոլեկտիվացումը, այդ շրջանները պետք է անցնեն կուլակության, վորպես դասակարգի, վերացման լոգունգի պրակտիկ կենսագործման:

Սակայն, սխալ կլիներ կարծել, վոր մեզ մոտ այժմ դոյութուն ունեն յերկու ինքնուրույն և հավասարադոր լոգունգ: Կուլակության, վորպես դասակարգի, վերացման լոգունգը հիմնական և գլխավոր լոգունգ է: Ավելի ու ավելի շատ թվով շրջաններ անցնում են համատարած կոլեկտիվացման: Ներկա տարում մենք հիմնականում կապարտենք համատարած կոլեկտիվացումը և կուլակության, վորպես դասակարգի, վերացումը այնպիսի հացահատիկային կարեվոր շրջաններում,

ինչպէս Հրապարակին Կովկասը, Ուկրաինայի դաշտա-
ին մասը, Ստորին Վոլգան և Միջին Վոլգան (Չափու-
թիյն) : Իսկ այն շրջաններում, ուր կոլտնտեսական շար-
ժումը թույլ է, այնտեղ պարզապէս դործում է սահ-
մանափակման հին լոգունքը : Այնտեղ սահմանափակ-
ման լոգունքը նպաստող, ոժաղակող լոգունք է : Այնտեղ
սահմանափակման քաղաքականութիւնը լրացվում է
մի շարք նոր մոմենտներով, վորոնք բղխում են կու-
լտուրային, վորպէս դասակարգի, վերացման մեր ընդ-
հանուր քաղաքականութիւնից : Ի պատասխան այդ
շրջանների կուլտուրային փորձերի՝ ինքնալուծարքի
յենթարկել իր տնտեսութիւնը, վտնջացնել անասուն-
ները և այլն, չի կարելի կանգ առնել կուլակների գույ-
քի բռնադրաման առաջ :

Վերին աստիճանի վնասակար կլինէր առանց խրտ-
ության, մեկ շարունակ, մեկ չափանիշով մոտենալ
բոլոր շրջաններին : Խնդիրն այն է, վոր կուսակցության
քաղաքականութիւնը կիրառելիս հաշվի առնվեն այս
կամ այն շրջանի կոնկրետ առանձնահատկութիւննե-
րը :

Առանձին դոուլությամբ մենք պետք է մոտենանք
ազգային շրջաններին : Այնտեղ կոլտնտեսական շար-
ժումը թույլ է : Այնտեղ բավարար չափով չեն զարգա-
ցած նույնիսկ կոոպերացիայի ամենապարզ ձևերը :
Այդ շրջաններում պրոլետարական ազդեցութիւնը,
կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշ-
խանության ազդեցութիւնն ավելի թույլ է, քան կենտ-
րոնական շրջաններում : Դրանով իսկ այնտեղ ուժեղ է
կուլակության, հոգևորականության, ազգայնական
տարրերի ազդեցութիւնը, վորոնք արգելք են հանդի-
սանում կոլեկտիվացման : Այդ շրջանները ներկայումս

դեռ չեն կարող ընդգրկվել համառարած կոլեկտիվաց-
մամբ : Արդտեղ մեր առաջ դեռևս կանգնած են չքաղու-
րության և բատրակության կազմակերպման, միջա-
կության համախմբման, կուլակության մեկուսացման
հակադասական խնդիրները : Մենք մեծ աշխատանք պիտի
կատարենք մարքեթու խորհրդային ապարատը, վորը
հետամնաց ազգային շրջաններում դեռևս խճողված է
անհարապատ տարրերով : Մենք վճռական քայլերի պի-
տի ձևոնարկենք Խորհրդային մարմինները հետադա-
յում ևս մոտեցնելու տեղական բնիկ ազգաբնակչու-
թյան :

Այդ շրջաններում մենք պետք է համառորեն, հաս-
տատարենք և անդադար դարգացնենք կոոպերացիայի
ամենապարզ ձևերը՝ սպասողական, վաճառահան-
ման, ինչպէս և արտադրողական : Մենք պետք է ամեն
կերպ ընդարձակենք կոոպերատիւցիան : Այդ տնտեսա-
պէս և կուլտուրապէս հետամնաց ազգային շրջաննե-
րում մոտ ժամանակներս ավելի խոշոր դեր պիտի խա-
ղա անհատական չքավոր միջակային տնտեսութիւնը :
Մենք պետք է նպաստենք այդ տնտեսութիւնների վե-
րելին, նրանց ապրանքայնության աճման և այլն :

Նրանք, ովքեր ցանկանում են այդ դժվարագույն
խնդիրները խարդախորեն փոխարինել մերի ապակու-
լակացման կամ կոլտնտեսութիւնները ազմինխատրա-
տիվ մեթոդներով հիմնելու քաղաքականությամբ,
նրանք կուսակցական դիրքերից ընկնում են «ձախ»
քալազոյցների ճահիճը : Նրանք, ովքեր իրենց պրակ-
տիկ աշխատանքների միջոցին հաշվի չեն առնում ազ-
գային շրջանների առանձնահատկութիւնները, նրանք,
ովքեր թերագնահատում են այն հանգամանքը, վոր
այդ շրջանները տնտեսապէս և կուլտուրական տեսա-

կետից չատ յետ են կենտրոնական շրջաններից, նրանք անուղղելի վնաս կպատճառեն մեր դործին: Քաղաքական կարճատևությունը կլինի միևնույն չափանիշով մոտենալ պրոլետարական ամուր կենտրոնների հետ կապված կենտրոնական շրջաններին և ծայրագավառների յետամնաց շրջաններին, վորոնք տեղ-տեղ դեռ ևս նստակյաց չեն դարձել, վորտեղ դեռ յերբեմն վարուժ են կիսաբոլորական, կիսանստակյաց կյանք:

Միևնույն ժամանակ մեկ շարունով չի կարելի մոտենալ բոլոր աղգային շրջաններին: Ուզրեկտանում, Կադակստանում, Կիրգիզիայում, Բուրիաթ-Մոնղոլիայում, Յակութիայում, Դաղստանում, Աբխազիայում, Աջարստանում և մի քանի այլ շրջաններում այժմ դեռևս որակարգի հարց չե համատարած կոլեկտիվացումը և նրա հիման վրա կուլակության վերացումը: Վրաստանում և Հայաստանում այժմ արդեն հնարավոր և համատարած կոլեկտիվացման շրջաններ կազմակերպել: Ուզբեկստանի և Դաղստանի առանձին առաջավոր շրջաններում ներկայումս արդեն հնարավոր է անցնել համատարած կոլեկտիվացման: Դրա հետ միասին համատարած կոլեկտիվացման մարզերի առավել յետամնաց շրջաններում (որինակ՝ Չեչնյա, Ինդուշեթիա, Բալխարիա-Հյուսիսային Կովկասում) համատարած կոլեկտիվացումն որակարգի հարց չէ:

Դրա հետ միասին մեծ սխալ կլինի հաշվի չառնել այն հանգամանքը, վոր մի շարք աղգային շրջաններում կոլտնտեսական շարժումը բավականաչափ հաջողություններ է ունեցել: Մի շարք աղգային շրջաններում գոյություն ունի առողջ և բնական ձգտում դեպի մասնատակոն կոլեկտիվացումը: Այդ շարժումը կասեցնե-

լու, նրան արհեստականորեն դադարեցնելու յուրաքանչյուր վորձ ձեռնտու կլինի միմիայն կուլակային տարրերին: Նման ձգտումների դեմ մենք պետք է ճիշտ այնպիսի համառ պայքար մղենք, ինչպես և այն տարրերի դեմ, վորոնք ցանկանում են հաշտ ապրել կուլակի հետ, վորոնք չեն ուզում համառ պայքար մղել կուլակի դեմ, սահմանափակել նրա չահադիտական տենդենցները և վտարել կուլակությունը: Պայքարելով ընդդեմ կուլակցության դժի աջ ուղորտունիստական աղճատումների, ուժեղացնելով պայքարն աղգային շրջանների կուլակության դեմ և կանգ չառնելով կուլակության նենդամիտ և վնասարարական տարրերի գույքի բռնադրավման առաջ, մենք վճռականապես հանդես պիտի գանք, «ճախական» ամեն տեսակ փորձերի դեմ՝ հացահատիկային հիմնական շրջանների պրակտիկան մեքենայորեն փոխադրելու ծայրագավառների յետամնաց շրջանները:

Կուլակության, վորպես դասակարգի վերացման քաղաքականությունը ձեռաց, առանց մտածելու յետամնաց շրջաններ փոխադրելը կարող է միայն արդեն հանդիսանալ և դանդաղեցնել այդ շրջանների անցումը սոցիալիստական յերկրադործության: Զգուշ, զգոն սոցիալիստական յերկրադործության: Զգուշ, զգոն քաղաքականությունը, վոր հաշվի չե առնում աղգային շրջանների բոլոր յուրահատկություններն ու առանձնահատկությունները՝ կարող է առավել արագ և առավել հաստատ կերպով այդ շրջանները մղել դեպի սոցիալիստական տնտեսություն: Պետք է ավելի սերտ համախմբվել աղգային շրջանների չբավոր՝ միջակային մասսաների հետ, մեկուսացնել այդ շրջաններում կուլակությունը, առայժմ շարժվել քիչ դանդաղ, բայց վորոշ ժամանակ հետո այդ շարժումն այնպես կարագանա,

ինչպես ներկայումս համառարած կոլեկտիվացման ջրը-
ջաններում :

ՈՒՐ Ե ՏԱՆՈՒՄ ՈՊՈՐՏՈՒՆԻՍԱԿԱՆ ԱՏՐԱՏԵԳԻԱՆ

Աջ ոպորտունիստներն ըստ ելուծյան բացասում
են կապիտալիստական տարրերի վրա հարձակվելու,
կոլեկտիվիզմի դեմ ծավալուն և անողոր պայքար մղելու
անհրաժեշտությունը: Աջերը հույս ունեն, վոր մենք
սոցիալիզմ կհերձակենք ինքնահոսով, առանց պայքարի,
ինքնաբերաբար: Աջերը կարծում են, թե նույնիսկ մեր
թշնամիները խաղաղ և անողոր կերպով պետք է ներա-
ճեն սոցիալիզմ:

Յեթե աջ ոպորտունիստները բացասում են հարձա-
կումը, ապա ձախակալները կողմնակից են անհիմն
հարձակման, առանց պաշտպանության, առանց նվաճ-
ված դիրքերն ամրացնելու, առանց ուժերի վերախմբա-
վորման: Նրանք չեն հասնակում, վոր անհիմն առաջ-
խաղացումը մահ է նշանակում հարձակման համար:

«Նրանք չեն հասնակում, վոր հարձակումն առանց
ամրացնելու նվաճված դիրքերը, անհաջողության մատ-
նված հարձակում է: Հարձակումը յե՛րբ կարող է հաջող
լինել, ասենք՝ ռազմական գործում: Յեթե մարդիկ չեն
սահմանափակվում անհիմն առաջխաղացումով, այլ
աշխատում են դրա հետ միասին ամրացնել նվաճված
դիրքերը, վերանվաճել իրենց ուժերը փոփոխված
պայմանների համապատասխան, ամրացնել թիկունքը,
ռեզերվներ պատրաստել: Ինչի՞ յեն պետք այդ բոլորը:
Նրա համար, վոր հարձակվողը յերաշխավորի իրեն ա-

նակնկալներից, վերացնել առանձին ճեղքվածքները,
վորոնցից յերաշխավորված չե վոչ մի հարձակում, և
այդպիսով նախապատրաստի թշնամու կատարյալ պար-
տությունը: Լեհական գործերի 1920 թ. սխալը, յեթե
վերցնենք միմիայն գործի ռազմական կողմը, այն եր,
վոր նրանք արհամարեցին այդ կանոնը: Դրանով և,
ի միջի ալլոց, բացատրվում այն հանգամանքը, վոր
նրանք անրոգ հաս առաջանալով միջին կիյեվ, հար-
կալոված յեղան նույնպես ամրողջովին առանց դադա-
րելու յետ քվեի մինչև Վարշավա: Խորհրդային գոր-
քերի 1920 թ. սխալը, յեթե կրկին վերցնենք գործի մի-
միայն ռազմական կողմը, այն եր, վոր նրանք կրկնեցին
լեհերի սխալը Վարշավայի վրա հարձակվելիս:

Նույն բանը պետք է ասել դասակարգային պայ-
քարի Փրոնտում կատարվող հարձակման որենքների
մասին: Չի կարելի հաջող հարձակում գործել դասա-
կարգային թշնամիների վերացման համար՝ չամրացնե-
լով զրավված դիրքերը, չվերանվաճելով իր ուժե-
րը, Փրոնտը չապահովելով ռեզերվներով, չամրացնելով
թիկունքը և այլն*):

Աջ ոպորտունիստների հաղթանակը կնշանակեր
հրաժարիմք բոլոր յեղան հարձակումից, սոցիալիս-
տական շինարարության անհաջողություն, կապիտա-
լիզացիա դասակարգային թշնամու հանդեպ, կապիտա-
լիզմի անխուսափելի վերականգնում: «Զախ» ոպորտու-
նիստների հաղթանակը կնշանակեր անհիմն «հարձա-
կում», վորն անխուսափելիորեն դատապարտված է ան-
հաջողության, հանգում է պրոլետարական դիկտատու-

* Ստույնը — Պատմության բնկեր կորստեսականներին

րայի կործանման և դարձյալ նույն կապիտալիզմի վերականգման :

Յե՛վ աջ, և՛ «ձախ» ստրատեգիայի և սակտիկայի հետեանքն անխուսափելիորեն կլինի հոկտեմբերի մեծ նվաճումների կորուստը : Միայն բազմամյա մարտերում փորձված բայլչեվիկյան ստրատեգիան և տակտիկան հնարավորութուն տվեցին մեր կուսակցութեանը սոցիալիզմի առանձին ճակատամարտերի հարձակումից անցնելու սոցիալիզմի ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակման՝ կապիտալիստական տարրերի դեմ :

Սոցիալիստական հաջող հարձակում գործելու համար պետք է ունենալ հաստատ թիկունք, պետք է ունենալ ամուր իշխանութիւն, պետք է ունենալ կատարելապես միաձուլ կուսակցութիւն : Ձի կարելի հաջող հարձակում գործել՝ չմերկացնելով և վերջնականապես չջախջախելով ձախի դիմակ հաղած և անդիմակ կապիտուլյանտներին : Կուսակցութեանը հաջողութեամբ դեկավարեց սոցիալիզմի ծավալուն հարձակումը հատկապես այն պատճառով, վոր անողոր պայքարեց 2 ֆրոնտում՝ ընդդեմ կոլակների գործակալութիւն հանդիսացող աջ ոպորտունիստների և ընդդեմ քաղաքների մանր-բոթ-թուաղիայի անհայտացող խավերի կամակատար տրոցկիստների և «ձախ» խոտորոզների :

ՉԱՆՉԱՆԵԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՍՈՒ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԻՆ

Ռամզինի, Կոնդրատյեվի և Դրոմանի հակահեղափոխական կազմակերպութիւնները, վորոնք յերկար ժամանակ բայքայիչ աշխատանք եյին կատարում՝ նպա-

տակ ունենալով տապալել խորհրդային իշխանութիւնը և վերականգնել կապիտալիստական կարգերը մեր յեկրում, չնայած իրենց հանցանքների տարբերութեաներին, միասնական ֆրոնտով հանդես եյին գալիս պրոլետարական պետութեան դեմ :

Բուրժուական ռեստավրատորների բռնի ծրագիրը վճռական հարցերում գուցադիպում եր աջ ոպորտունիզմի ծրագրին : Սոցիալիստական ինդուստրացիան տեմպերի թուլացման համար մղվող պայքարում, դուրի սոցիալիստական վերակառուցման տեմպերի կրճատման համար մղվող պայքարում, կուլակի վրա սոցիալիստական հարձակումը թուլացնելու համար մղվող պայքարում, արտաքին առեւտրի սոցիալիստական մոնոպոլիայի թուլացման համար մղվող պայքարում, այս բոլոր հարցերում աջ ոպորտունիստներն անմիջականորեն զոդվում եյին Կոնդրատյեվ-ռամզինյան հակահեղափոխութեան հետ :

Հակահեղափոխական փնտաւարական կազմակերպութիւնների ստաջնորդներն անկեղծորեն և բացարձակ հայտարարում եյին, վոր վճռական հարցերում նրանք տարաձայնութիւն չունեն աջ ոպորտունիստների հետ : Հատկապես այդ պատճառով գրոմանները, կոնդրատյեւներն ու ռամզիններն այնպիսի սիրով և այնքան մեծ հույսով հետեւում եյին աջերի քայքայիչ ուղիստանքներին :

Կապիտալիստական ռեստավրացիայի վիթխարի գայլերը շատ լավ եյին հասկանում, վոր աջ ոպորտունիստներն ընդունակ են միայն կամուրջի դեր կատարելու, վորի վրայով իշխանութիւնն անմիջականորեն կընկնի բուրժուաղիայի ձեռքը : Նրանք շատ լավ եյին հասկանում, վոր աջերի հաղթանակը նշանակում է դիւշումներ կապիտալիստական տարրերին, նրանք դատաւարաբար դատում եյին, վոր աջերի հաղթանակը նշանակում է կապիտալիստական տարրերի ուժեղացում,

վորոնք չեն բավարարվի աջերի ղեկավարներով, այլ կա-
հանջեն /և կվերցնեն ալելին: Բուրժուական հեղաշրջ-
ման իրեղևիկները դիտելին, վոր աջ ուղիորդներին տա-
կան ծրագրի հաղթանակը տանում է դեպի կապիտա-
լիզմի վերականգնում, նրանք հասկանում եյին, վոր
աջերի՝ իշխանութեան դուրս անցնելուց հետո մի քայլ
կմնա միայն մինչև իշխանութեան գերակումը բուր-
ժուական տարրերի ձեռքով:

Կապիտալիստական ռեստավրացիայի տրուբադուր-
ներ Ռամզինը և Կոնդրատյեվը պայքարում եյին յերկրի
սոցիալիստական ինդուստրացման դեմ: Նրանք չառ-
լավ եյին հասկանում, վոր խոշոր արդյունաբերու-
թյունը սոցիալիզմի հիմքն է: Նրանց ուղադրությունն
ուղղված եր դեպի մի կողմ՝ ամեն կերպ, բոլոր մի-
ջոցներով և ուժերով կասեցնել խորհրդային յերկրի
ինդուստրացման գործը: Դրան նրանք ձգտում եյին
հասնել տեխնիկական և պլանային վնասարարութեան
միջոցով, արդյունաբերութեան հետագա զարգացման
համար յեղած ներքին մեծագույն հնարավորություն-
ները թափցնելու ճանապարհով:

Գաղտնի վնասարարութեան հետ միասին բուր-
ժուական իրեղևիկայի մոնետրիկները չեյին քաշվում
յերբեմն բացահայտ հանդես գալու կուսակցութեան
վարած ինդուստրացման տեմպերի դեմ: Այսպես սր.
1927 թ. սկզբին Կոնդրատյեվը կռվում եր ինդուստրաց-
ման քաղաքականութեան դեմ՝ ինդուստրացման «ծալ-
րահեղությունների» դեմ պայքարելու գրոշակի ներքո:
Նա գրում եր.

«Ինդուստրիալիզմի ծայրահեղությունները
նախ և առաջ բնորոշվում են նրանով, վոր մենք
արդյունաբերութեան զարգացման համար վեր-

ցրել ենք այնպիսի տեմպ, վորը վեր է մեր ու-
ժերից»^{*)}:

Այսպիսով, Տրոցկու ներկայիս չաղակրատություն-
ներն ինդուստրացման տեմպերի ուժերից վեր և անի-
րական լինելու մասին, ինչպես և աջերի բազմաթիվ
և բազմախոս հայտարարություններն ու ալ՝ «ձախ»
բլոկի հերոսների (Սիլեցով և Լոմինաձե) հայտնու-
թյունները միմիայն հանդիսանում են Կոնդրատյեվի և
թյունները միմիայն հանդիսանում են Կոնդրատյեվի և
նրա կոմպանիայի կուլակային հնացած յերգերի ուղա-
ցած և տաղտուկ կրկնությունը:

Սոցիալիստական ինդուստրացման ելությունը մի-
միայն արդյունաբերութեան լուի ծավալումը չէ: Սո-
ցիալիստական ինդուստրացման ելությունը առաջին
հերթին հանդիսանում է ծանր արդյունաբերութեան,
այսինքն արդյունաբերութեան այն ճյուղերի՝ արագ
ծավալումը, վորոնք արտադրում են արտադրութեան
միջոցներ:

Սոցիալիստական ինդուստրացման նպատակն է վոչ
միայն բարձրացնել արդյունաբերութեան բաժինն ընդ-
հանուր ժողովրդական անասութեան մեջ, այլ դրա
հետ միաժամանակ ալելացնել ծանր ինդուստրիայի բա-
ժինը մեր արդյունաբերութեան մեջ:

Միայն այս ճանապարհով կարելի լի սոցիալիզմ
կառուցել մեր յերկրում, միայն այս ճանապարհով
մենք կարող ենք ապահովել խորհրդային յերկրի տըն-
տեսական ինքնուրույնությունը և թույլ չտալ, վոր
մեր յերկրըր զառնա համաշխարհային կապիտալիստա-
կան տնտեսութեան մի կցորդ:

^{*)} Н. Д. Кондратьев. Задачи в области сельского хозяйства в связи с общим развитием народного хозяйства и его индустриализацией. стр. 9.

Հատկապես այդ պատճառով կոմունիզմի յերգվյալ թշնամիներ Գրոմանը, Կոնդրատյեվը և Ռամզինը վոչ միայն պայքարում ելին ինդուստրացման տեմպերի կրճատման համար, այլև առանձին ուժով ուղղում ելին կրճատել ծանր ինդուստրիայի զարգացման տեմպերը:

Չբավարարվելով իր հայտարարությամբ, թե ինդուստրացման տեմպերը մեր ուժերից վեր են, Կոնդրատյեվը չարունակում է.

«Այնուհետև ինդուստրացման ծալրահեղություններն այն են, վոր մենք գնում ենք ինդուստրիալ արդյունաբերության միջոցներ արտադրող ծանր ինդուստրիայի այնպիսի զարգացման ուղիով, վորը վեր է մեր ուժերից»:

Անցնելով պրակտիկ առաջարկներին, Կոնդրատյեվն առաջարկում է վոչ միայն «սահմանափակել» արդյունաբերության կապիտալ շինարարության տեմպը, նրա ծավալը փոքրացնելով մոտ 15 տոկոսով», այլև առանձնապես ընդգծում է, վոր.

«Միաժամանակ անհրաժեշտ է փոփոխել կապիտալ ծախսերի հարաբերությունը ծանր ինդուստրիայի և թեթև ինդուստրիայի միջև, վորն արտադրում է պատրաստի առարկաներ՝ վերջինիս տեսակարար կշիռը բարձրացնելու իմաստով»:

Այսպիսով, աջ սպորադիստների բազմիցս կատարած փորձերը՝ թուլացնելու ծանր արդյունաբերության ծավալման տեմպը, խոչոր արդյունաբերության զարգացման տեմպերի կրճատման հաշվին զարգացնել թեթև արդյունաբերությունը, այս բոլոր ձգտումներն արտահայտում ելին Կոնդրատյեվների ակնկալիքները:

Աջերը միմիայն կրկնում ելին Կոնդրատյեվական հին թեզիսները:

Դրանից հետո մեթե կարելի չե զարմանալ այն ուրախության վրա, վոր պատեց Կոնդրատյեվներին, յերբ սկսեցին հանդես գալ աջ տնտեսագետների բազմատեսակ հողվածները: Այդ հողվածներում ասվում էր, թե միևնույն է, պլանները կարելի էլինի կրճատել, վոր կապիտալ շինարարության տեմպերը ունալ չեն և այլ գերիմաստություններ:

Բնավ տարիտրինակ չե, վոր Կոնդրատյեվները չըզլաջան թագնվելու Բուխարինի թիկունքի յետեմ: Կոնդրատյեվը Ֆինոդկոմատի գտման օրմանակ, 1929 թվին ասում էր.

«Յես համաձայն եմ Բուխարինի հետ, վոր յերբ աղյուս չկա, ապա չի կարելի կառուցել... Յերբ կուգե՛ք՝ պետք է հավասարվիլ ճեղ տեղերին: Այդ պատճառով յես հետեյալ ձեմակերպումը կմտցնեյի. հավասարվիլ ճեղ տեղերին...»:

Բուրժուական ռեստավրատորներն իրենց հույսը դրել ելին գյուղում կապիտալիստական ամուր տնտեսություններ զարգացնելու վրա: Կոնդրատյեվը հորդորում էր չվախենալ կուլակից: «Մեր հողային որհնարում էր չվախենալ կուլակից: Կոնդրատյեվը, յերկյուղ դրության մեջ, — ասում է Կոնդրատյեվը, — յերկյուղ կա գոյություն ունեցող և գոյություն չունեցող կուլակից»: Ընկ. Բուխարինը վճռեց ցուցադրել իր խիզախությունը և Կոնդրատյեվին ապացուցել իր անվահեղությունը կուլակի վերաբերմամբ: Յեմ, ի հրճվանք Կոնդրատյեվների, Բուխարինն իր աշակերտների պլեյադայով սկսեց զարգացնել խզճուկ իդեաներ կուլակի խաղաղ ներաճման մասին՝ սոցիալիզմ, խզճուկ իդեա-

ներ այն մասին, վոր կուլակը բացարձակապես սարսափելի չէ մեզ և այլն: Յեվ կատարելապես որինական եր կոնդրատյեվականների հրձվանքը, յերբ աջերը հանդես յեկան ընդդէմ կուլակի դեմ կիրառվող արտակարգ միջոցների, վորը փորձում եր հացի դործադուլ կադմակերպել:

Բուրժուական ռեստավրատորները, հարուստ, մութ անհատական անտեսութեան իդեոլոգները բնականաբար պայքարում եյին կոլեկտիվացման դեմ: Յերբ «սկզբունքով» պատրաստակամութուն հայտնելով կոլեկտիվացման դադափարի վերաբերմամբ, կոնդրատյեվը հայտարարում եր, վոր այդ դադափարն իրագործել կարելի չէ միջ շուտ, քան 600 տարի հետո: Բնավ դարմանալի չէ, վոր Կոնդրատյեվը հիացմունքով դիմավորեց Բուխարինի այն հայտարարութեանը, թէ կոլտնտեսութեանն այն հիմնական ուղին և զլիսովոր ճանապարհը չեն: Վորով չբավորմիջնակային մասսաները առաջնաան դեպի սոցիալիզմ:

Ավելի շատ հարցեր կարելի յեր թվարկել, վորոնց վերաբերմամբ աջերը մոտենում են կոնդրատյեվականներին, բայց այդ անելու հարկ չկա: Մենք պետք է միայն մատնանշենք, վոր պրոլետարական սկսութեան քաղաքականութեան միջոցական և հիմնական հարցերում նրանք ըստ ելութեան սոցացին մինչև կոնդրատյեվականները դիրքերը:

Այլ ոպորտունիզմի կուլակային ծրագիրն առանձնապես մոտ եր Կոնդրատյեվի և Ռամզինի տխրի բուրժուական ռեստավրատորների հոգուն: Այլ ոպորտունիստները տեսակետների կուլակային ելութեանը կոնդրատյեվներին և ռամզիններին իրավունք եր տալիս աջերին համարելու իրենց դաշնակիցները և իրենց գործակալները: Այդ պատճառով աջերին հասցված յուրա-

քանչյուր հարված նրանք ընդունում եյին իրենց հասցեյին: Այս կամ այն ալ ոպորտունիստի դեկավար ալյուրանքից հեռանալը նրանք համարում եյին մի վնաս՝ հասցված իրենց գործին, այսինքն՝ մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու գործին:

Տեսնելով ալ ոպորտունիստների և կոնդրատյեվականների հայացքների միատեսակութունը ու գաղափարների զուգադիպութեանը, մենք չպետք է մոռանանք այն տարբերութիւնը, վոր գոյութեան ունի նրանց միջեւ: Սխալ կլինէր աջերին և կոնդրատյեվականներին կուլակել մի խմբի մեջ: Այդ մի սխալ է, կաններին կուլակել մի խմբի մեջ: Այդ մի սխալ է, վորը ձեռնուր յե միայն ալ ոպորտունիստներին: Մենք ալ ենք համարում նրանց, ովքեր կուսակցութեան հիմնական գծից հեռանում են և մոտենում բուրժուական իդեոլոգիային: Մենք ալ ենք համարում նրանց, ովքեր հեռանում են դեպի կոնդրատյեվչիան, ովքեր անցնում են կուլակութեան դիրքերը: Կոնդրատյեվականները կուլակութեան գիտակից պաշտպաններն են, կոմունիզմի գիտակից քշնամիները, կոնդրատյեվականները բուրժուական հեղաշրջման իդեոլոգներն են:

Այլ ոպորտունիստները մեր յերկրում փորձում եյին կոծկել այն տարբերութեանը, վոր գոյութեան ունի կուսակցութեան ներսի ալ թեքման և յերկրում յեղած հակահեղափոխական վտանգի միջեւ: Նրանք բանավոր դեկլարացիաներ անելով, թէ անհրաժեշտ է պայքարել կուսակցական իդեոլոգների ալ հայացքների դեմ, վորբուրժուական իդեոլոգների ալ հայացքների դեմ, վորձում եյին հանել կուսակցութեան ներսում յեղած ալ ոպորտունիստական հայացքների դեմ պայքարելու հարցը:

Բուրժուական վնասարարների դեմ հաջող պայքարելու համար անհրաժեշտ է ջախջախել մեր շարքերում

յեւթե նրանց դործակալներին : Ամեն կերպ օւժեգացնելով պայքարը տվյալ մոմենտի ամենից վտանգավոր և օպորտունիստների դեմ, բայց չվիճկյան խստութեամբ գուրս նետելով կուլակային այդ գործակալներին մեր կուսակցութեանից, մենք ղերանով խել ամրացնում ենք մեր կուսակցութեան պողպատյա շարքերը և բարձրացնում ենք նրա մարտունակութեանը յերկրի հակահեղափոխական վտանգի դեմ մղվող անդադար և անողորմ պայքարում :

կարողացան ճանաչել որոցկիպի իսկական դերն ու հ-
յությունը:

նացնում են իրենց ծրագրերը, վորը պետք է առաջացնի տնտեսական ճգնաժամ, իսկ դրա հետեւանքով՝ ասպտամբուլթյուն խորհրդային իշխանության դեմ և նրա անկումը»:

Կոնդրատյեւներն ու մակարայները հասկանում են ինչ, վոր գեր-ինդուստրացման և սրա-հեղափոխական դրույթները միայն մյուս ծայրից են տանում դեպի նույն հետեւանքը՝ կապիտալիզմի վերականգնումը և խորհրդային իշխանության տապալումը: Հատկապես այդ և պատճառը, վոր նրանք դեմ չեն պաշտպանելու տրոցկիստական գաղափարները: Այն մոմենտին յերբ կատարելապես անկարելի դարձավ մեր արդունարերութեան ծավալման հատկապես նվազեցված միներալիստական ծրագրի ներս խցկելը, կապիտալիստական ռեստավրացիայի իդեոլոգներն ընտրեցին մի այլ ուղի՝ արդունարերութեան այս կամ այն ճյուղի ծավալման բացարձակ ուղղութեամբ, կատարելապես չհիմնավորված, դիտավորյալ կերպով չափազանցեցրած և միանգամայն անիրական պլաններ կազմելու և պաշտպանելու ուղին: Բուրժուական վնասարարները պաշտպանում են ինչ արդունարերութեան այս կամ այն ճյուղի ծավալման անիրական տեմպեր, վորոնք ապահովված չեն բավականաչափ հումքի բազայով, վորպեսզի վորոշ չըջանում, յերբ անհամապատասխանութիւն հայտարարվի արդունարերութեան այդ ճյուղի զարգացման տեմպերի և նրա հումքի ռեսուրսներով սպահովված լինելու միջեւ՝ ոահմանափակվի արդունարերութեան այդ ճյուղը, կանգ առնեն և կոնսերվացիայի յենթարկվեն դործարանները: Բնավ զարմանալի չէ, վոր այս հարցում կոնդրատյեւականներն ու ռամզինականները մերձեցան «ճա-

խականներին» հետ, վորոնք տարված են ինչ գերինդուստրացման վերաբերյալ կեղծ հեղափոխական ֆրազներով:

Կուլակային հակահեղափոխութեան իդեոլոգները մեր յերկրի կոլեկտիվացման անհաշտ ու մահացու թըշնամիներն են: Նրանք տեսնում են ինչ, վոր համատարած կոլեկտիվացումը կործանում է բերում կուլակութեան համար և պոկում է կապիտալիզմի վերջին արմատները մեր յերկրում: Բայց յերբ գլուղի հիմնական մասները մեր յերկրում: Բայց յերբ գլուղի հիմնական մասներն իրենց յերեսը դարձրին դեպի սոցիալիզմ և կոնգրեսից ինչ կոլտնտեսական շարժման ճանապարհի վրա, կոնգրեսից ինչ կոլտնտեսական շարժման ճանապարհի վրա, յերբ մասսաներն իրենց փորձով սկսեցին համոզվել վոր յերադասելի յե տնտեսութեան կոլեկտիվ յեղանակը, կոնդրատյեւականները բռնեցին մի այլ ճանապարհ՝ կոլտնտեսական շարժումը մյուս ծայրից վարկաբեկելու ճանապարհը:

1929 թ. վերջում Մակարովը, Չայանովը և մյուսները հանդես յեկան, վորպես բռնի, հարյուր տոկոսով կոլեկտիվացման մոնետիկներ:

«Պետք է վորոշ միջոցներ ձեռք առնել, վորում է Մակարովը, — վորպեսզի հանրայնացման տեմպեր համարյա հասցվի 100 տոկոսի հեցայմ, վորովհետեւ հանրայնացման արտադրանքները հանդիսանում են գլուղատնտեսութեան արտադրանքներ ու ժերը վորոշ մակարդակի վրա պահպանելու և հետագա զարգացումը խթանելու մի պոյուցես: Յեա տասցի, վոր հապաղումն այս տեսակետից խորապես բացասական դործ կլինի»:

Կուլակութեան յերգվյալ իդեոլոգը այսպես սրտա-

ուռչ կերպով համերաշխութեամբ եր «ձախ» խոտորումներէ հետ :

Իսկ Մակարովն ինչպե՞ս եր յերդում, վոր անմիջապէս և առանց հետաձգելու կոլեկտիվացումը կատարւի հարլուր տոկոսով : Նա առաջարկում եր իրադրոճել մանր արտադրութեայն ազգայնացումը : Մակարովը մենակ չեւ կոնդրատյեվականներէ մեջ : Չախ խոտորողական իդեոլոգիայի բացահայտ պրովակացիոն պրապագանդան մղում եյին նաև կոնդրատյեվի հակահեղափոխական կուսակցութեայն մյուս առաջնորդները : Այսպէս որինակ՝ պրոֆեսոր Չայանովը հայտարարում եր, թե կոմունիստները պետք և «փոքր, բայց ամբախիտ բանակով, ռազմական ուժով գյուղացիներին բռնելու և անտեսութեամբ յուսնելը :

Կոնդրատյեվները, մակարովներն ու չայանովները շատ լավ եյին հասկանում, վոր կոլտնտեսական շարժման լենինյան կամավորութեայն սկզբունքի խախտումը, կոլեկտիվացման ժամանակ կիրառված ճնշումն անխուսափելիորեն պետք ե հանդէս կոլտնտեսական շարժման խափանման և վարկաբեկման : Հատկապէս կոլտնտեսական շարժման վարկաբեկման և խափանման համար և, վոր չայանովականները պաշտպանում եյին «ձախ» խոտորումներն : Բոլորովին պատահական չե, վոր մի շարք վարչերում իրականութեայն մեջ «ձախ» խոտորումները միայն խաղալիք եյին կուլակներէ ձեռքում : Մի ամբողջ շարք վարչերում «ձախ» խոտորումներէ թիկունքի հետե անմիջականորեն կանգնած եյին կուլակները, վորոնք թեթեւամիտ ձախականներին պրովակացիայի ձեւով դրդում եյին ճնշում գործադրելու միջակի վարաբերմամբ :

Կոնդրատյեվականներէ ամբողջ աշխատանքը սպառնիչ և ակնհայտ կերպով ցույց ե տալիս տրոցկիստներէ և «ձախ» խոտորումներէ խակական դեմքը : Տրոցներէ և «ձախ» խոտորումներէ ամբողջ աշխատանքը և կիստական կաղմակերպութեայն ամբողջ աշխատանքի կերտրոցիկիզմի ռեցիդիվները «ձախ» խոտորումներէ կերտարանքով՝ հակայական պաշտպանութիւն և անմիջական ողնութիւն հանդիսացան մեր թշնամիներին պըրոլետարական դիկտատուրայի դեմ մղած նրանց պայքարում :

Այլ և «ձախ» ոպորտունիստներէ հաղթանակը անխուսափելիորեն տարբեր ծայրերից կհանդեր միեւնոյն հետեանքին՝ կապիտալիզմի վերականգնմանը մեր յերկըրում : Այլ և «ձախ» ոպորտունիստներէ խլուրդային աշխատանքը դուրացնում ե բուրժուական ռեստավրատորներէ գործը : Բուրժուական ռեստավրատորները և՛ աջ, և «ձախ» ոպպոզիցիայի մեջ տեսնում են իրենց դաշնակիցներին :

Կոնդրատյեվական հակահեղափոխական կազմակերպութեայն դեկալարներէց մեկն ուղղակի հայտարարում եր, վոր նրանց կուսակցութիւնը հեմարան եր գտնում ինչպէս Համկ(բ)Կ «ձախ» տրոցկիստական ոպպոզիցիայի, այնպէս և աջ ոպպոզիցիայի հայացքներէ մեջ, և այդ հեմարավորութեայնը՝ հեմկել իշխող կուսակցութեայն մերսի հոսանքներէ վրա, կողմնորոշել նրանցով, հաշի առնել նրանց բիշ բե շատ հավանաբար հաջողութեայնները՝ բացառիկ մեծ դեր խաղաց կունդրատյեվական կուսակցութեայն համար : Կունդրատյեվի կուսակցութեայնը, —ասում եր նրա առաջնորդներէց մեկը, — Համկ(բ)Կ մերսում ոպպոզիցիոն խմբա-

վարումներ չլինելու դեպքում կթուլանար և բերելու հասներ չգոյության աստիճանի:

Այն հանգամանքը, վոր բուրժուական ռեստավրատորները հենարան կարողացան գտնել աջերի և «ձախերի» հայացքներում, այն հանգամանքը, վոր բուրժուական ռեստավրատորները կարողացան հենվել մեր կուսակցության ներսի աջ և «ձախ» հոսանքների վրա, միանգամայն պատահական չէ, վորովհետեւ և՛ աջ և՛ «ձախ» ուղորտունիստներն իրենց մեջ արտացոլում են պրոլետարական ղեկատուության թշնամի դասակարգերի դիմադրությունը:

Տրոցկիզմի իդեոլոգիան քաղաքային մանր-բուրժուազիայի քայքայվող խավերի իդեոլոգիան է, աջերի իդեոլոգիան կուլակուլության իդեոլոգիան է: Սակայն պրոլետարական ղեկատուության թշնամի այդ դասակարգերը միմյանցից անջատված չեն չինական պարիսպով: Իրական կյանքում նրանք հազարավոր թեկնորով կապված են և շատ ուրինական կերպով հյուսված իրար: Հատկապես աջ և «ձախ» ուղորտունիստների սոցիալական արմատների ընդհանուր բնույթը յուրացնում է աջերի և «ձախերի» մերձեցումը տեսականում և պրակտիկայում: Աջ և «ձախ» ուղորտունիզմի դասակարգային արմատները վաղ միայն պայմաններ են առաջացնում աջ-«ձախական» բլոկներ ստեղծելու համար, այլ և դուրացնում են ուղորտունիստական տարրերի մերձեցումը բացահայտ հակահեղափոխական կազմակերպությունների հետ:

Հեղափոխության ներկայիս փուլի վրա, սոցիալիստական ծավալուն հարձակման չըջանում, յերբ պրոլետարիատն ամենուրեք նեղում է կապիտալիստական

տարրերին, յերբ համախմբվում են կոմունիստին թշնամի ուժերը, մենք նկատում ենք նաև, վոր մերձեցում և յոգևորում են աջ և «ձախ» ուղորտունիստները մեր կուսակցության մեջ:

Հակառակն վոչինչ չկա նրանում, վոր Սերցովի գլխավորությամբ գործող լիբերալ ինտելիգենտները աջ ուղորտունիստական Փրակցիոն խմբակը հակակուսակցական բլոկ կնքեց Լոմինաձեյի և Շացկինի ղեկավարությամբ գործող մանր-բուրժուական ինտելիգենտների Փրակցիոն խմբակի հետ:

Սերցովի Փրակցիոն խմբակը հանդես եր գալիս կուսակցության քաղաքականության դեմ՝ բուխարինյան հին դադափարների դրոշակի ներքո: Սերցովը, Հուսինովը, Կալրատսկին և մյուսներն ըստ եյուրթյան միայն կրկնում էին աջ ուղղիցիայի սնանկացած դադափարները: Նրանք նախ և առաջ հանդես եյին գալիս մեր յերկրի ինդուստրացման տեմպերի դեմ: Նրանք գտնում էյին, վոր մեր պլանները հիմնավորված և ռեալ չեն:

Սոցիալիստական շինարարության արագ տեմպերի համար մղած մեր պայքարը նրանք հայտարարում էյին թվախաղ: Հանդիպական արդժիքնալան կազմելու համար բանվորների մասսայական շարժումը նրանք պատկերացնում էյին, վորպես կարյերիստների և չինովնիկների անպատասխանատու ձգտում՝ հաճոյանալու իրենց պետերին: Նրանք իրենց պաշտպանության տակ էյին առնում մեր տնտեսական ապարատի այն բյուրոկրատացած և ճզճիմ տարրերին, վորոնք մեկոցնում էյին կրատացած և ճզճիմ տարրերին, վորոնք ինդուստրացբանվորների նախաձեռնությունը, վորոնք ինդուստրացման տեմպերի արագացման ձգտող մասսաների աշխատանքներին:

յովի և Լոմինաձեյի Ֆրակցիոն խմբակները բոլոր կա-
ռուցվում եր աջ ուղորտունիստական գաղափարների հի-
ման վրա:

Կուսակցութիւնը բաղմիցս առիթ է ունեցել հան-
դիպելու անսկզբունք բռնկներ կնքելու փորձերի հետ,
վարոնք նախատակ են ունեցել պայքարել ընդդէմ բայլչե-
վիկյան հիմնական դժի, ընդդէմ լենինիզմի: Դեռ 1908
թվին կուսակցական կոնֆերենցիաներից մեկում Լենի-
նի դէմ քվեարկեցին «ձախ» վայելքողականներն ու աջ
բաղնդականները՝ միասնական փրօնտով: Բոլորին հայ-
տնի յէ, թէ ինչպէս 1912 թ. Տրոցկին փորձեց բոլոր
«ձախ» և աջ հակալենինյան հոսանքներից ոգոսառայան
բոլոր կազմել բայլչեվիզմի դէմ պայքարելու համար:

Դեռ բոլորի հիշողութեան մեջ թարմ է Զինովյեվի
և Տրոցկու ուղղիցիոն բռնկը, վորի դրոշակի ներքո
միացած «ձախ» ֆրակցիոնի հերոսները անդոր
ձայնով վայնասուն էյին բարձրացնում գերինդուս-
տրացման մասին և բացահայտ աջ ուղորտունիստները
(Շանին և ուրիշները), վորոնք պայքարում էյին հա-
նուն մեր յերկրի ազրարացման:

Սիբցովի և Լոմինաձեյի աջ-ձախ անսկզբունք բռն-
կը ինքնուրուշն վոչ մի բան չբերեց: Նորութիւն է մի-
այն այն վոր իրենց հակակուսակցական ֆրակցիոն աչ-
խատանքը նրանք ամեն կերպ դիմակաւորում էյին լիա-
կատար համաձայնութիւն հայտնելով կուսակցութեան
հիմնական դժին: Նախորդ ուղղիցիոն բոլոր խմբավո-
րումների անանկացումն ու վարկաբեկումը, մեր կու-
սակցութեան լենինյան ղեկավարութեան հակալական
հեղինակութիւնը, մեր կուսակցութեան հիմնական դժի
ձշտութեան ստուգումն ու հաստատումը սոցիալիստու-

կան հարձակման տմբողջ փորձով, — այդ բոլորը հար-
կադրեց աջ-ձախական բռնկին պայքարելու ընդդէմ կու-
սակցութեան դժի, ընդդէմ կուսակցական ղեկավարու-
թեան՝ ծածուկ, ընդհատակյա յեղանակներով, խորա-
պես գաղտնի: Զախականները և աչերի ֆրակցիոն բռնկը
սխտեմատիկարար, համառ և յեռանդուն կերպով խա-
րելով կուսակցութեանը, հասով բարոյական լիակա-
տար անկման: Ժողովներում, համագումարներում,
մամուլում իրենց լիակատար համաձայնութիւնը հայտ-
նելով կուսակցութեան դժին, նրանք դադարին ծածկա-
նելով կուսակցութեան դժին, մարդիկ էյին հալա-
բար ուժեր էյին պատրաստում, մարդիկ էյին հալա-
բում, ընդհատակյա կազմակերպութիւն էյին հիմնում,
վորը անանակաւ ճգնաժամի մոմենտին՝ վորի անխու-
սափելիութիւնն էյին գուշակում աջ-ձախական բռնկի
առաջնորդները, պետք է բոլոր դժգոհ տարրերի ղրութե
անցներ և իրենով փոխարիներ կուսակցութեան ղեկա-
վարութիւնը:

Բացարձակապէս ակներեւ է, թէ ինչ դժգոհ տար-
րերը ալտի դիմավորեյին Սիբցովին ու Լոմինաձեյին: Աջ-
ձախական բռնկը ուղորտունիստների մի բոլոր է, վորն
արտահայտում է սոցիալիստական հարձակման հար-
մաձանների տակ տապալվող պրոլետարական ղեկատարու-
թեան թշնամի դատակարգերի շահերն ու ակնկալիք-
ները: Իսկ կուլակութեան և քաղաքի մանր-բուրժուա-
զիայի քայքայվող լաւերի շահերն եր արտահայտում
այդ աջ-ձախական բռնկը:

Նրանց հայացքներն ու նրանց աշխատանքի մեթոդ-
ները կուսակցութիւնը վոչ մի բոլոր չեր կարող հան-
դուրեւել: Կուսակցութիւնը բայլչեվիկյան ամբողջ ան-

Բայլչ. հարձ. արվ.—3

րում են խորհրդային իշխանության դեմ, վորոնք վոր-
ձում են գլխավորից վնասարարությամբ նախապատրաս-
տել խորհրդային իշխանության անտեսական սնանկու-
ցումն ու տապալումը: Վնասարարները դեմ ավելի հա-
ջող պայքարելու համար անհրաժեշտ է պատրաստել
մասնագետներին նոր կադրեր, վորոնք վոխարինեն
բուրժուական մասնագետներին:

Ամբողջ Փրոնտով հարձակումը հաջող մղելու հա-
մար անհրաժեշտ է արմատապես վերակառուցել մեք-
սյրոլետարական կազմակերպությունները:

Պետք է վճռականապես շարունակել Արհմիու-
թյունների աշխատանքի վերակառուցումը, վորոնք ա-
ռաջ Տոմսիու գլխավորությամբ ոպորտունիստական
դեկավարություն ստանալով, անմիջականորեն չեյին
մասնակցում արտադրությանը, վորոնք չկարողացան
կազմակերպել սյրոլետարական մասսաների արտադրա-
կան խանգավառության հզոր վերելքը:

Անհրաժեշտ է վերակառուցել մեր կոոպերացիայի
աշխատանքը, հալածել նրանից չարչիական, նեպմանու-
կան վողին հարվածել նրան աշխատելու սոցիալիստա-
կանորեն, վոչ թե հող տանելով մեծ շահի մասին աջ
աշխատելով կազմակերպել աշխատավորության հատուկ
մատակարարումը:

Անհրաժեշտ է վերակառուցել խորհրդային ապա-
րատի աշխատանքը, գյուղական խորհուրդների յերեսը
գարձնել դեպի կոլտնտեսական շարժումը, քաղաքային
խորհուրդների յերեսը գարձնել դեպի արտադրու-
թյունը: Անհրաժեշտ է խորհրդները մաքրել աջ և
«ձախ» ոպորտունիստներից և բարձրացնել խորհրդներին
դերը, վորպես կուսակցության հիմնական զծի կրող-

ներին: Սոցիալիզմի հաջող հարձակման համար մեծա-
գույն նշանակություն է ստանում ապարատի վերակա-
ռուցումը՝ նրան գյուղին մոտեցնելու, շրջանային ո-
ղակներն ի հաշիվ գալառների վերացման ամրացնելու
իմաստով:

Վերակառուցելով բոլոր կազմակերպություններին
աշխատանքը, անհրաժեշտ է ամբողջ բանվոր դասա-
կարգի և բոլոր աշխատավորների ուշադրությունը
հրավիրել արդյունաբերության գալաացման տեմպերի
արագացման, ինդուստրացման ու ժեղացման վրա,
վորը հիմք է հանդիսանում ամբողջ ժողովրդական տըն-
տեսության վերակառուցման համար: Բոլոր կազմա-
կերպություններին և ամբողջ աշխատավորության ուշա-
քությունը պետք է հրավիրվի Խորհումտեսությունների
և կոլտնտեսությունների շինարարության տեմպերի
արագացման վրա:

Պայքարն աջերի դեմ, վորոնք հանդես են գալիս
քնդդեմ սոցիալիստական շինարարության արագ տեմ-
պերի և բոտ ելության գլորվում այն դերքերը, վորոնք
տանում են դեպի կապիտալիզմի վերակառուցումը,
այդ պայքարը բայլչեվիկյան հարձակման բաղկացու-
ցիչ մասն է: Դրա հետ միասին չի կարելի բայլչեվիկ-
յան հարձակում մղել՝ չոպքարելով առաջ վազող «ձա-
խերի» դեմ, վորոնք կամ Փանտաստիկ պլաններ են ա-
ռաջադրում կամ ձգտում են վարչական հրամաններով
փոխարինել մասսաների կամավոր մորելիզացիան:

Սոցիալիզմի ամբողջ Փրոնտով հարձակումը հաջող
վարելու համար անհրաժեշտ է բարձրացնել կուսակցա-
կան կազմակերպություններին բոլոր ողակների մարտու-
նակությունը:

Սոցիալիզմի ծաղալուն հարձակման մեջ հսկայա-
կան դեր են խաղում մեր գլուղակաւ կուսակցական բը-
ջիջները: Յուրաքանչյուր հարձակման հաջողութիւնը
նախ և առաջ կախված է անմիջական պայքար մղող ջո-
կատների մարտական պատրաստականութիւնից: Միա-
մբտութիւն է կարծել, թե հարձակումը մղում է միայն
գլխավոր հրամանատարութիւնը և վոր ստորին ջո-
կատների դերը մեծ նշանակութիւն չունի: Հատկապէս
այնտեղ, ներքեւում, անմիջականորեն չըմաններում,
գլուղական պրակտիկայում են վճռվում կարեւորա-
պէս հարցերը: Հատկապէս գլուղում յուրաքանչյուր
բջիջ, յուրաքանչյուր կուսակցութիւն, ամեն մի
գլուղխորհուրդ պետք է հարձակում դրածի կապիտա-
լիստական տարրերի դեմ: Նրանց անձնվիրութիւնը հե-
ղափոխութեան, նրանց դատակարգային կայունութեա-
նը, նրանց դատակարգային մարտունակութիւնը պետք
է ստուգվի վոչ միայն նրանով, թե նրանք ինչպէս կը-
քվեարկեն հոգուտ համագումարի վորոշումների, վոչ
միայն նրանով, վոր նրանք պետք է հռչակեն սոցիա-
լիզմի ծաղալուն հարձակման լողորնները բոլոր բնա-
գաւառներում, այլ նախ և առաջ նրանով, թե իրենց
մոտ, գլուղական պրակտիկայում նրանք ինչպէս կը-
բազործեն կուսակցութեան վորոշումները:

Գլուղական կուլեկտիվներն իրենց ուղադրութեան
կենտրոնը պետք է դարձնեն կուսակցական շարժման
հետագա զարգացման համար մղվող պայքարը, հիշե-
լով, վոր կուսակցութիւնների համար մղվող պայքար-
ը մեր կուսակցութեան վնասկան խնդիրն է: Բջիջները
պետք է իրենց յերեսը դարձնեն դեպի կուսակցութե-
անները, զբաղվեն կուսակցութիւնների արտա-
գրական կյանքի հարցերով, նրանք պետք է պայքար

մղեն անտեսարարութեան, շփոթութեան, աշխա-
տանքի վատ կազմակերպելու և վնասարարների դեմ,
կուսակցութիւններում: Բջիջները պետք է անմիջա-
կանորեն աշխատեն ընդհարմակել ցանքերի տարածու-
թիւնը, բարձրացնել բերքատուութիւնը և կուսակցութե-
անները յեկամուտը: Բջիջները պետք է ողնեն
կուսակցութիւններին կարգավորելու մասնաշաղկապ
աշխատանքը անհատ անտեսարարների մեջ, վորպէսզի
կուսակցութիւնները հաշվեալութիւն ներկայացնեն
անհատականներին իրենց աշխատանքների և հաջողու-
թիւնների մասին, վորպէսզի կուսակցութեաններն
ընկերական ճիշտ փոխհարաբերութիւններ ստեղծեն
անհատականների հետ՝ անչեղորեն հետեւելով այն ըս-
կըրուներին, վոր անհատականները վաղվա կուսակց-
ականներն են:

Անհրաժեշտ է վերջ դնել չբաւարարող մեջ կա-
տարվող աշխատանքներում բջիջները ցուցաբերած
պատիվութեանը: Չբաւարարողութեան և բաւարարողութեան
կազմակերպման և համախմբման աշխատանքը պետք է
հանդիսանա բջիջների ուղադրութեան կենտրոնը: Բջիջ-
ները պետք է ուժեղացնեն մասնաշաղկապ աշխատանքը
անհատականների և կուսակցականների մեջ, աշխա-
տելով կուսակցութեան շարքերը ներդրովի կուսակցու-
թեան դեմ մղվող պայքարում կովմած չբաւարարողութեան,
բաւարարողութեան, բաւարարող կուսակցականների տ-
աւալովոր ներկայացուցիչներին:

**ԱՎԱՐՏԵՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ**

Մեր առաջ իր բովանդակ հոտակութեամբ պատ-
կերվում է ներկա տարում սոցիալիստական եկամտի-

կայի հիմքի կառուցումն ավարտելու բովանդակալից պլանը:

Մեր արդյունաբերության արտադրանքի աճումը ներկա տարում հավասարվելու յե նախապատերադմ-
յան ամբողջ արտադրությանը: Այս տարի ժողովրդա-
կան յեկամուտը աճելու յե 39 տոկոսով: Յեթե ժողո-
վրդական յեկամուտը ներկա տարվա աճման տեմպերը
համեմատենք ժողովրդական յեկամուտի նախահեղա-
փոխական շրջանի աճման տեմպերի հետ, ապա կստաց-
վի, վոր 1900 թվից մինչև 1913 թվը, 13 տարում ժո-
ղովրդական յեկամուտն աճել է 39 տոկոսով: Այսպի-
սով, ԽՍՀՄ ժողովրդական յեկամուտը մեկ տարում ա-
ճելու յե այնքան, վորքան Լախսհեղափոխական շրջանի
13 տարիների ընթացքում: Նախահեղափոխական շրջա-
նում ժողովրդական յեկամուտը տարեկան միջին հաշ-
վով աճում էր 2,6 տոկոսով, իսկ մեզ մոտ 1931 թվին
նա պետք է աճի 39 տոկոսով: Ամերիկայում, Անգլիա-
յում և Գերմանիայում վերջին տարիներս ժողովրդական
յեկամուտը տարեկան աճում է 3-ից 6 տոկ., իսկ մեզ
մոտ 1931 թվին նա աճելու յե 30 տոկ.:

1931 թ. ժողովրդատնտեսական պլանի հիմնական
ցուցանիշները վկայում են, վոր մեր յերկրը վերթխարի
արագությամբ առաջանում է գեպի սոցիալիզմ: Յեթե
1929—30 թ. պետական բյուջեն կազմում էր մոտ 12
միլիարդ ռուբլի, 1931 թ. պետական բյուջեն հաս-
տատված է գրեթե 22 միլիարդ ռուբլու սահմանում:
Այսպիսով, մեկ տարում պետական բյուջեն մեծանում է
2 անգամ:

Սոցիալիստական հատվածի կապիտալ ներդրում-

ները այս տարի ավելանում են 74 տոկ.: Կապիտալ ներ-
դրումների խոշոր մասը հատկացվելու յե արդյունաբե-
րության:

Մենք անշեղորեն շարունակում ենք յերկրի ինդուս-
տրացման քաղաքականությունը: Ներկա տարվա ժողո-
վրդատնտեսական պլանը նախատեսում է ինդուստրի-
ալ բաժնի հետագա մեծացումը յերկրի ժողովրդական
տնտեսության մեջ: Պլանը նախատեսում է մեր յերկրի
եկեֆտրիֆիկացիայի հետագա ուժեղացումը: Ներքուրա-
շինարարության կապիտալ ներդրումները ներկա տա-
րում ավելանում են 2 անգամ (450 միլիոնից մինչև 900
միլիոն):

Ներկա տարին ահռելի տեղաշարժումներ պետք է
առաջացնի նաև գյուղատնտեսության բնագավառում:
Հիմնական և վճարական նշանակություն ունեցող հացա-
հատիկային շրջաններում (Հյուս. Կովկաս, Ուկրաինայի
հատիկային շրջաններում և միջին վոլգա) մենք
գաշտային մասը, հարավային և միջին վոլգա) մենք
մտադիր ենք հիմնականում ավարտել համատարած կո-
լեկտիվացումը: Մենք պետք է աշխատենք, վոր ներկա
տարում գյուղատնտեսության մեջ կոլեկտիվացած
տնտեսությունների տոկոսը 50-ից պակաս չլինի:

Այս պլանի իրագործումը նշանակելու յե, վոր սո-
ցիալիստական հատվածը գերակշռող տեղ կբռնի գյու-
ղատնտեսության մեջ: Այդ նշանակելու յե, վոր լենին-
յան «ով» ումը» հարցը հիմնականում վճարվելու յե նաև
վերջին բնագավառում՝ գյուղատնտեսության մեջ:
Մենք կավարտենք սոցիալիստական եկանոմիկայի հիմ-
քի կառուցումը:

1926 թ. գեկտեմբերի 7-ին Կոմինտերնի դործկոմի
3-րդ ընդլայնած պլենումում տված էր գեկուցման մեջ

ընկ. Ստալինն ասում է. «Մենք նվաճեցինք պրոլետարիատի դիկտատուրան և գրանով իսկ Բաղախան քաղաք ստեղծեցինք զեպի սոցիալիզմն առաջանալու համար: Մենք կարող ենք, արդյոք, մեր սեփական ուժերով տնտեսական բազա ստեղծել, տնտեսական նոր հիմք, վերն անհրաժեշտ և սոցիալիզմի կառուցման համար: Վերջն և սոցիալիզմի տնտեսական եյությունը և տնտեսական բազան: Արդյոք, այն չե՞, վեր մենք յերկրի վրա հիմնենք «յերկրային դիկտատ» և ընդհանուր բախանալություն: Վոչ, այդ չէ: Այդ սոցիալիզմի տնտեսական եյության քաղքենիական, մեղանական պատկերացումն է: Տնտեսական բազա ստեղծել սոցիալիզմի համար՝ նշանակում է գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի հետ միասին մտցնել մեկ ամբողջական տնտեսության մեջ, գյուղատնտեսությունը յենթարկել սոցիալիստական ինդուստրիայի գերակալության, գյուղի և քաղաքի հարաբերությանները կարգավորել՝ գյուղատնտեսության և ինդուստրիայի արտադրանքների ուղղակի փոխանակության հիման վրա, փակել և վերացնել բոլոր այն ճանապարհները, վերանց ողնությամբ ծնվում են դասակարգերը և ծնվում է նախ և առաջ կապիտալը, ի վերջո ստեղծել արտադրության և բաշխման աշխարհի պայմաններ, վերանց ուղղակի և անմիջականորեն տանում են դեպի դասակարգերի վերացումը»:

«Զախ» ֆրազներով աչքակալություն անող վոդորմեյի շատախոսները կուսակցությանը մեղադրում եյին բոլոր մահացու մեղքերի մեջ նրա համար, վոր նա պաշտպանում էր մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան թեորիան: Ծիծաղելի և հիմարություն կլինեք

այժմ վեճը չարունակել արոցկիսաների և զինովյեվա-կանների հետ: Կուսակցությունը վոր միայն խոսքով, այլ և գործնականապես ապացուցում է սոցիալիզմի կառուցման հնարավորությունը մեր յերկրում: Սոցիալիստական եկանոմիկայի հիմքի կառուցման աշխատումը մի տաղանաքար կլինի արոցկիզմի բուրժուական թեորիայի դերեղմանի վրա, վորի համաձայն անհնար է սոցիալիզմ կառուցել մեր յերկրում:

Լուի այն փաստը, վոր կուսակցությունը, վորպես մերձակա տարվա պրակտիկ խնդիր՝ առաջադրում է սոցիալիստական եկանոմիկայի հիմքի կառուցման աշխատումը, նշանակում է սոցիալիզմի վիթխարի հաղթանատուժը, նշանակում է սոցիալիզմի շինարարության նախորդը: Միայն սոցիալիստական շինարարության առաջին յերկու հաղթանակներին, միայն հնդամյակի առաջին յերկու տարիներին խոշորագույն նվաճումների հիման վրա մենք կարողացանք ներկայումս ամբողջ վճռականությամբ առաջադրել իր համաշխարհային պատմական նշանակությունը իր համաշխարհային աշխարհի 1931 թ. ապրտել սոցիալիզմի տնտեսական բազայի կառուցումը:

Մենք մեր յերկրում արդեն վերացրել ենք գործադրելությունը՝ կապիտալիստական աշխարհի այդ սարսուռների ժառանգությունը: Նվաճված հաջողություններին հիման վրա մենք կարողացանք կոնտրոլ թվեր կազմելուց անցնել միասնական ժողովրդատնտեսական պլանին: Կարմեյուն: Մնցյալում պետական բյուջենը կազմելուց մենք այժմ արդեն կարող ենք անցնել միասնական ֆինանսական պլանին կազմելուն: Այդ բոլորը վկայում են պլանային տարրերի վիթխարի աճումը մեր յերկրում: Սոցիալիստական հատվածն այժմ իր ձևությամբ և պահում ամբողջ ժողովրդական տնտեսության

բոլոր տնտեսական լծակները: Մենք արդեն թելակոխել ենք սոցիալիզմի դարաշրջանը:

Սոցիալիստական շինարարության խոշորագույն հաջողությունները, վերջինք մեզ հասցրին սոց. դարաշրջանը, մենք կարողացանք ձեռք բերել այն պատճառով, վոր մեր կուսակցությունն անչեղորեն իրագործում էր մեր յերկրում սոցիալիզմը՝ կառուցելու լենինային մեծ պլանը:


Յերբ մեր յերկրը քաղաքացիական պատերազմից անցավ տնտեսական խաղաղ շինարարության, Վլադիմիր Իլյիչն ամեն կերպ ընդգծում էր, վոր մենք կապիտալիզմը արմատախիլ չենք արել, վոր ներքին թշնամու հիմքը մենք չենք քանդել: Լենինն ասում էր, վոր ներքին թշնամու հիմքերը վերջնականապես կործանելու, կապիտալիզմի հիմքը խորտակելու համար անհրաժեշտ է մեր յերկրի տնտեսությանը, հաշված նաև յերկրագործությունը, փոխադրել տեխնիկական նոր բազայի ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական նոր բազայի վրա: Հատկապես այդ է պատճառը վոր Լենինն ամբողջ ուժով առաջ էր մղում ելեկտրոֆիկացիայի, ինդուստրացիայի պլանը:

Դասակարգային թշնամու դեմ մղած կատաղի պայքարում, ուղորտունիստական տարրերի դեմ մղած անհաշտ պայքարի մեջ կուսակցությունն անչեղորեն իրականացրեց լենինյան պլանը: Յեւ 1931 թ. սկզբին ելեկտրոֆիկացիայի պլանը հիմնականում կատարված է: Մեր յերկրի արդյունաբերության դարգացման նախընթաց տասնամյակի սկզբնական ուրվագծերը մեծ չափերով դերադանցվեցին:

Ինդուստրացիայում ծավալելու հիման վրա, վորը

տնտեսական բազա յև ստեղծում դյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար, մենք կարողացանք անցնել դյուղատնտեսության համար տեխնիկական նոր բազա ստեղծելու խնդրի, դյուղացիական փոշիացած և ցիր ու ցան մանր տնտեսությունները սոցիալիստական խոշոր արտադրության ուղիներին վրա փոխադրելու խնդրի հաջող լուծման:

Մենք մեր առաջ խնդիր ենք դրել ներկա տարում ավարտել սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: Մեր առաջ դեռևս բազմաթիվ դժվարություններ կան: Դեռևս մեր առաջ է դասակարգային կատաղի պայքարը: Սոցիալիզմի տնտեսական բազայի կառուցումն ավարտելու լարված և ծանր աշխատանքի տարին մենք դեռ չենք անցել: Իր պատմական և համաշխարհային նշանակությամբ բազմաբուլանդակ և մեծագույն խնդիրը մենք կկարողանանք լուծել միայն ընթանալով լենինյան ուղիով, ամենալայն մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելով պայքարելու ընդդեմ աջ մոբիլիզացիայի յենթարկելով պայքարելու ընդդեմ են տվյալ ուղորտունիստների, վորոնք հանդիսանում են տվյալ շրջանի գլխավոր վտանգը, ինչպես և «ճախական» դաշտավարներին, վորոնք նույնպես, ինչպես և աջերը տանում են դեպի սոցիալիստական հարձակման անհաջողությունն ու պարտությունը:



CA³¹
305

3

ՀՀ Ազգային գրադարան



NL0203598

32.046